2010, ՓԵՏՐՎԱՐ Ա, ԹԻՎ 3 (311)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՍԲ ՂԵՎՈՆԴՅԱՆՔ, ՍԲ ՎԱՐԴԱՆԱՆՔ

«Հայր մեր զՍուրբ Աւետարանը գիտեմք եւ Մայր՝ Առաքելական Եկեղեցի Ընդհանրական»

*Եղիշէ*



Սուրբ Եղիշե վարդապետի այս՝ միանգամայն ինքնօրինակ բնորոշումը՝ իբրեւ հիմնական գաղափար եւ շարունակություն առաքյալների ու մարգարեների այն քարոզչության, որի նպատակն էր հավատքով ու տեսիլքով վերագտնել տալ ժամանակի ոգին, արմատախիլ անել մտածողության եւ զգացումի թերարժեք դրսեւորումները, մահվամբ ու մարտիրոսությամբ անմահությունը ժառանգել՝ վասն Քրիստոսի Եկեղեցու, այս էլ որերորդ անգամ լուսավորում եւ հուզավառում է մեզ զորությամբ ու փառքով ամենախնամ, ինչպես Ավետարանն է պատգամում. «Երանի որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան» (Մատթ. Ե 6), քանզի՝ «Ոգի առաւել է, քան զկերակուր, եւ մարմին՝ քան զհանդերձ» (Ղուկ. ԺԲ 23):

Մեր մատենագրության մեջ սակավաթիվ չեն այնպիսի դեպքերն ու իրադարձությունները, ինչպիսիք այնքան էլ չեն կարեւորվել, այնքան էլ նշանակալից արձագանք չեն ունեցել գուցե հարեւան այս կամ այն երկրում, սակայն մեր փոքր ու մեծ հայրենիքի կյանքում դարձել են նշանակալից հանգրվաններ եւ անմահացել: Քանզի սրանք այլ բան չեն, եթե ոչ լույս ու լուսե խորհուրդներ՝ ինքնիշխան կամքի ու վերակերտման արդար իրավունքի, որովհետեւ ինքնության եւ ազգային ինքնագիտակցության վառ ու անկրկնելի վկայություններ են՝ վասն կենաց ազգիս եւ հայրենյաց, վասն հավատի ու հայապահպանության: Մեկ անգամ չէ, որ ապրելը մեզ համար հավասարապես նշանակել է լինել ազատ ու արժանապատիվ հայրենիքի զավակ, իսկ ամենից առաջ՝ քրիստոնյա եւ Հայ Եկեղեցու որդեգիր, քանի որ մեզ համար չի եղել երբեւէ այլ ճանապարհ, դիտակետ ու ելակետ: Ինչպես հավաստում է մեր, իիրավի, բազմադարյան պատմությունը, մեր ժողովրդի այն հատվածը, որը փորձել է այլ կերպ կամ այլ հենակետով առագաստ մեկնել դեպի առաջ ու «լայն ուղեծիր», կորցրել է իր ինքնահատուկ տարբերությունն ու հունցվել համընդհանուրի մեջ: Ահա թե ինչու, շարունակ խոսելով այս կամ այն իրողության մասին, մենք մեր բոլոր զգայարաններով հանգում ենք մի եւ նույն ճշմարտությանը. «Հայր մեր զՍուրբ Աւետարանը գիտեմք եւ Մայր՝ Առաքելական Եկեղեցի Ընդհանրական»: Այս ճշմարտությունն այնքան ակներեւ է, որ մինչ մեզանում ոմանք կգիտակցեին, դրսում արդեն մտածում էին, թե ինչպես կարելի պիտի լիներ փոխել մեր մաշկի գույնն ու դեմքը: Այս հարթության վրա ամենեւին էլ զարմանալի չպիտի նկատվեր, եթե որեւէ երկիր, ծածկելու համար իր ամոթը կամ վերանայելու իր վերաբերմունքը, չհրաժարվեր այնպիսի դրսեւորումներից, որոնք կարող էին ուղղակիորեն ստվեր գցել մեզ վրա: Եվ եթե այս ամենին գումարենք ժամանակի քաղաքական կացությունը, դավանանքի տարբերությունների խնդիրն ու սրանցից բխող հետեւանքները, այսօրվա հեռավորությունից ընդհանուր եզրահանգումներ պետք է երեւան գային՝ շատ ավելի պարզորոշ ու տեսանելի: Այսու՝ մեզ համար եւս մի կարեւոր հայտարար. ողջախոհ լինելու համար եւ զգույշ լինելուց առաջ նույնքան անհրաժեշտ է տարբերակել մեզանում կենցաղավարող գաղափարախոսությունների ու հետաքրքրությունների աղբյուրը: Վերջինը եւս ավետարանական հիմք ունի. «Ծառը պտղից է ճանաչվում»: Ահավասիկ այն շարժումը, որն ըստ էության ընդգրկել է մեր ժողովրդի բոլոր շերտերը եւ որը հայտնի է Ղեւոնդյանց եւ Վարդանանց պատերազմ անունով, իիրավի, եղել եւ մնում է այսօրինակ դրսեւորումներից ամենաինքնօրինակն ու ամենալուսավորը. «[Սուրբ Հովսեփն ու սուրբ Ղեւոնդը] խրատեցին, ամրապնդեցին եւ բոլորին Քրիստոսի զինվորը դարձրին, այնպես որ կարելի էր զարմանալ նրանց աներկյուղ համարձակության վրա... [Կանայք] մոռացան իրենց կանացի տկարությունները եւ տղամարդիկ դարձան հոգեւոր պատերազմի մեջ...»: Դեպքերի անմիջական մասնակից Եղիշե վարդապետի նկարագրությունն այնքան պատկերավոր է, որ պարզապես դավանաբանական ձեռնարկ կամ ճառ է հիշեցնում՝ այդուհանդերձ մնալով գրական այնպիսի ժանրային համակարգում, որտեղ հաշված ու հայտնի ստեղծագործություններ են մտել՝ անգամ համաշխարհային գրականությունից: Ողջ պատմության ընթացքում անսայթաք շարունակությամբ նկարագրվում են այնպիսի տեսարաններ՝ զգացմունքի ու կամքի այնպիսի նվիրական ոգեկանությամբ, որ թվում է, թե բնությունն իրեն հատուկ եղանակային պայմանների ավանդույթը վերանորգել ու շարունակել, ամբողջացրել է Տղմուտ գետի ափին՝ Ավարայրի դաշտում: Երեւակայել կարելի է, թե հավասարապես վարդապետ, բանասեր, պատմիչ, բանաստեղծ ու փիլիսոփա հեղինակը ինչպիսի ներանձնական ապրումով եւ որքան խորախորհուրդ բովանդակությամբ է արձանագրում իր աչքի տեսածը՝ իրավամբ դառնալով հայ մտքի թարգմանն ու քնարերգուն: Գեթ մեկ նախադասությամբ՝ «Երբ Արշակունյաց ցեղը վերացավ, Հայոց աշխարհին տիրեց պարսիկ Սասանի ցեղը», իր պատմության հենց առաջին գլխում՝ հենց առաջին մտքի շարադրանքում, հեղինակը միանգամից անդրադառնում է մի քանի կարեւոր հանգրվանների՝ միաժամանակ ակնարկ նետելով առիթ-պատճառ-հետեւանք հարթություններին, ինչպես նաեւ հետեւեցնելով խրատն ու խորհուրդը. «Մի աշխարհ երկու իշխող չի ունենա»:

*Շարունակությունը՝ էջ 3*

## ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԿԱՄ ՆԱԽԱՍՏԵՂԾՆԵՐԻ ԴՐԱԽՏԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

Մեծ պահքն սկսվում է Բուն բարեկենդանով: Այն խորհրդանշում է նախաստեղծների՝ Ադամի ու Եվայի դրախտային անհոգ եւ ուրախ կյանքը, իսկ հաջորդ օրվա երկուշաբթիով սկսվող Մեծ պահքը՝ պատվիրանազանցությամբ դրախտից վտարվելը, որի համար Մեծ պահքի երկրորդ կիրակին արդեն անվանվում է Արտաքսման եւ նվիրված է Ադամի ու Եվայի՝ դրախտից արտաքսմանը:



Այսպիսով, ինչպես որ մարդը չպահեց առաջին՝ աստվածադիր պահքը՝ չուտել դրախտի բարու եւ չարի իմացության ծառից եւ վտարվեց դրախտից, այնպես էլ դրախտին վերստին արժանի ենք դառնալու պահքով, զղջմամբ ու ապաշխարությամբ առ Աստված դառնալով:

Ադամն ու Եվան դրախտում թեմայով նկարները հիմնականում գտնվում են կա՛մ Աստվածաշնչի արարչագործության պատկերների շարքում եւ կա՛մ էլ՝ Բուն բարեկենդանին նվիրված գործերի սկզբում, ինչպես որ նկարազարդ շարակնոցների՝ Բուն բարեկենդանի կանոնի սկզբում դրված են այս թեմայով նկարները, իսկ պատկերների ներքո գրված է. «Կանոն Բուն բարեկենդանի»:

Մարդու ստեղծումը, լինելով արարչագործության պսակը, պատկերվում է վեցօրյայի շարքում, ուր յուրաքանչյուր օրը ներկայացվում է մի առանձին դրվագով, եւ կինոյի դիպաշար հիշեցնող այս պատկերաշարի յուրաքանչյուր դրվագում պատկերվում է Աստված՝ արարչագործության տվյալ օրվա կատարած արարմամբ:

Արարչագործության առաջին օրը, ինչպես Աստվածաշնչում է ասվում, «Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը. երկիրն անձեւ ու անկազմ էր, խավար էր տիրում անհունի վրա, եւ Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրա: Եվ Աստված ասաց. «Թող լույս լինի»: Եվ լույս եղավ: Աստված տեսավ, որ լույսը լավ է, եւ Աստված լույսը բաժանեց խավարից»:



Այս տողերին համահունչ է ներկայացրել Հովհ. Այվազովսկին քաոսից, անկերպությունից ու խավարից աշխարհի ու տիեզերքի արարումը: Երկնային անհունի ընդհանուր համապատկերին՝ կտավի վերեւում, Հայր Աստված է, որ ճառագում է որպես լույս:

Եղիշեն իր «Արարածոց մեկնության», այսինքն՝ «Արարչագործության բացատրությունը» գործում գրում է, որ լույսը հրից է ծնվում, եւ հուրը մոտիկից են ճանաչում, իսկ լույսը՝ հեռվից տեսնում: Եվ այս կտավին աստվածային անհաս լույսը Հայր Աստծուց որպես ոսկեդեղին լույս է տարածվում՝ իրենով լցնելով երկինքն ու երկիրը, լույսի ցոլքերը տարածելով մինչեւ ջրերի անդունդները:

8-րդ դարի կաթողիկոս մատենագիր Զաքարիա Ձագեցին գրում է, որ երկիրն անձեւ ու անկազմ էր, որովհետեւ ջուրը ծածկել էր երկիրը: Եվ այս նկարում ջրային անկերպ հորձանքն աշխարհաստեղծ կարգի մեջ է դրվում լույսի տարածմամբ:

Ձագեցին այնուհետեւ գրում է, որ լույսը երկրի անդունդների վրա հետապնդեց խավարին՝ հալեցնելով ցրելով այն, եւ խավարը կուլ գնաց գիշերին, ու լույսը տարածվեց մինչեւ անդունդների խորքերը: Այս կտավում Այվազովսկին իրեն բնորոշ հանճարի ուժով պատկերել է լույսի այս տարածումը Հայր Աստծուց դեպ տիեզերքի անհունները եւ երկրի ջրային անդունդները:

*Շարունակությունը՝ էջ 3*

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Երուսաղեմ

Փետրվարի 15-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը երկօրյա այցով մեկնեց Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն:

Այցի ընթացքում Նորին Սրբությունը Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արք. Մանուկյանին փոխանցեց նաեւ ՀՀ նախագահի Սերժ Սարգսյանի կողմից Պատրիարքին շնորհված «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանը՝ գահակալության 20-ամյակի եւ ծննդյան տարեդարձի առիթով:



Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթեւ արք. Ղարիբյանը, Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ արք. Մուրադյանը, ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանը, ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արք. Տերտերյանը, ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Վիգեն արք. Այքազյանը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արք. Կճոյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս Խաչատրյանը եւ Տ. Գարեգին աբեղա Համբարձումյանը՝ իբրեւ գավազանակիր:

# Տյառնընդառաջի տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին մեծ շուքով տոնախմբեց Տյառնընդառաջը՝ 40-օրյա մանուկ Հիսուսի ընծայումը տաճարին:

Տոնի նախօրեին՝ փետրվարի 13-ի երեկոյան ժամերգության ավարտին, Մայր Աթոռ Սբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց նախատոնակի արարողություն եւ անդաստանի կարգ, որով հավատացյալ ժողովրդին ազդարարվեց Տյառնընդառաջի տոնի սկիզբը: Այնուհետեւ Մայր տաճարի իջման սուրբ սեղանի կանթեղից բոցավառված մոմով Ամենայն Հայոց Հայրապետը վառեց Մայր տաճարի շրջափակում պատրաստված Տյառնընդառաջի ավանդական կրակը:

Մայր Աթոռի միաբանները եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաները հանդես եկան շարականների եւ ազգային երգերի կատարումներով՝ բաշխելով ներկա բարեպաշտ ժողովրդին Քրիստոսի խորհրդանիշ լույսը:

Փետրվարի 14-ին տոնի առիթով Մայր տաճարում մատուցվեց պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ հովանու ներքո գործող հայորդյաց տների տեսուչ Տ. Կոմիտաս վրդ. Հովնանյանը: Իր քարոզի մեջ հայր սուրբն անդրադարձավ այս տարի զուգադիպող Տյառնընդառաջի եւ Բուն բարեկենդանի տոների խորհուրդներին եւ վերջիններիս արտացոլմանն ազգային մեր բանահյուսության մեջ:

Հավարտ պատարագի Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ կատարվեց արդեն ավանդույթ դարձած նորապսակ զույգերի օրհնության կարգը: Արարողությանը ներկա նորապսակներին Նորին Սրբությունը նաեւ հանձնեց նվերներ:

# Սրբոց Վարդանանց տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Փետրվարի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Սրբոց Վարդանանց տոնի առիթով մատուցվեց սուրբ պատարագ: Պատարագիչն էր Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպս Մաշալյանը:

Անդրադառնալով սուրբ Վարդանանց նահատակության խորհրդին՝ պատարագիչ սրբազանը մասնավորապես նշեց. « ...Վարդանանց պատերազմն ավարտված չէ, շարունակվում է նաեւ այսօր, շարունակվում է բոլոր նրանց դեմ, ովքեր ուզում են վերացնել մեր ազգի ոգին՝ Հայոց Եկեղեցին: Եվ այդ շարունակվող պատերազմի ընթացքում մեզանից յուրաքանչյուրը պարտականություն ունի իրեն համարելու եւ զգալու իբրեւ Վարդանանց հետեւորդներ, քաջ Վարդանի զինվորներ...»:

Սրբոց Վարդանանց օրը Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին նշում է նաեւ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության տոնը: Այս առիթով պատարագից հետո Մայր տաճարում հանդիսավոր կերպով կատարվեց Հայրապետական մաղթանք: Մայր Աթոռի միաբաններն ու բարեպաշտ ժողովուրդը աղոթք ուղղեցին Տիրոջը՝ Մայր Աթոռի անսասանության ու պայծառության, Ամենայն Հայոց Կաթողիկոսի առողջության եւ խաղաղ ու բեղուն հայրապետության համար:

Նույն օրը Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիսություն՝ նախագահությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպս Գալթագճյանի: Վարդանանց հերոսամարտի մասին բանախոսությամբ հանդես եկավ ճեմարանի դասախոս Դավիթ Գյուրջինյանը՝ ներկաների ուշադրությունը վերստին սեւեռելով Վարդանանց կատարած գործի եւ ոգու վրա: Տոնին նվիրված շարականների եւ հայրենասիրական երգերի կատարումներով ելույթ ունեցան ճեմարանի սաները:

# Միջեկեղեցական կյանք

Հունվարի 24-30-ը Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի օրհնությամբ Մոսկվայի Պատրիարքարանի՝ ՌԴ զինված ուժերի եւ արդարադատության նախարարության հետ հարաբերությունների բաժինը կազմակերպել էր **«Եկեղեցու եւ պետության հարաբերությունները՝ արդարադատության եւ կրթության ոլորտներում» խորագրով հանդիպումներ:**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովին մասնակցել է Մայր Աթոռի միաբան Տ. Գարեգին աբեղա Համբարձումյանը եւ հանդես եկել «Արդարադատության ոլորտում Եկեղեցու եւ պետության հարաբերությունները Հայաստանում» զեկույցով:

***

2010 թ. հունվարի 26-31-ը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունում (Անթիլիաս), տեղի ունեցավ **Կաթոլիկ եւ Հին Արեւելյան Ուղղափառ եկեղեցիների միջեւ աստվածաբանական երկխոսության համատեղ հանձնախմբի 7-րդ հանդիպումը**:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուց հանդիպմանը մասնակցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու եւ Հրատարակչության տնօրեն Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպս Նալբանդյանը (Ամենայն Հայոց Կաթողիկոսություն), Տ. Օշական արք. Չոլոյանը (Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն) եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Միջեկեղեցական հարաբերությունների վարիչ Տ. Նարեկ եպս Ալեմեզյանը:

Հանդիպման ընթացքում Եզնիկ սրբազանը հանդես եկավ բանախոսությամբ՝ ներկայացնելով Տիեզերական ժողովների ընդունման կարգը Հայ Եկեղեցում եւ այս գործընթացի հետ կապված՝ Հայ Եկեղեցու սկզբունքներն ու մոտեցումները:

***

Փետրվարի 4-ին Մոսկվայում տեղի ունեցավ **ԱՊՀ եւ բալթյան երկրների Քրիստոնեական միջեկեղեցական խորհրդակցական կոմիտեի քարտուղարության նիստ՝ «Քրիստոնեական ընտանիքը՝ «փոքր եկեղեցի» եւ առողջ հասարակության հիմք» թեմայով:**

Նիստին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էր Գեղարքունիքի թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպս Հովհաննիսյանը, ով հանդես եկավ «Խառնամուսնություններ. քրիստոնեական Եկեղեցիների փորձառությունը» զեկույցով:

# Մեծ Բրիտանիայի հայոց թեմի նորընտիր առաջնորդը

Փետրվարի 10-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Վահան ծ. վրդ. Հովհաննիսյանը ստանձնեց Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդի պաշտոնը:

Տ. Վահան ծ. վրդ. Հովհաննիսյանը Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդ է ընտրվել 2009 թ. դեկտեմբերին գումարված բրիտանահայ համայնքային եւ եկեղեցական խորհրդի ժողովի ընթացքում: Առաջնորդի ընտրությունը հաստատվել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական օրհնությամբ:

Վերջին տարիներին հայր Վահանը ծառայում էր ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի Նյու Յորքի Սրբոց Նահատակաց եկեղեցում՝ իբրեւ հոգեւոր հովիվ:

***

Տ. Վահան ծ. վրդ. Հովհաննիսյանը (ավազանի անունը՝ Սարգիս) ծնվել է 1963 թ. Բաղդադում: 1988 թ. ձեռնադրվել է սարկավագ եւ մեկնել ԱՄՆ՝ ուսումը շարունակելու Նյու Յորքի Ս. Վլադիմիր աստվածաբանական ճեմարանում: 1990 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա: 1995 թ. պաշտպանել է վարդապետական թեզը, իսկ 2006 թ. ստացել ծայրագույն վարդապետության աստիճան՝ ատենախոսելով «Գ Կորնթացիս թուղթը» թեմայով:

Որպես հոգեւոր հովիվ՝ ծառայել է Նյու Յորքի Ս. Խաչ եւ Նյու Ջերզիի Սրբոց Ղեւոնդյանց եւ Նյու Յորքի Սրբոց Նահատակաց եկեղեցիներում: Որոշ շրջան եղել է Ս. Վարդան առաջնորդանիստ եկեղեցու լուսարարապետը:

Ֆորդհեմ համալսարանից ստացել է աստվածաշնչագիտության դոկտորի աստիճան:



# Նորաօծ քահանաները ծառայության կոչվեցին թեմերում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ դեկտեմբերի 13-ին ձեռնադրված նորաօծ քահանաները, ավարտելով իրենց քառասնօրյա պահեցողության շրջանը, ծառայության են կոչվել Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու թեմերում:

Տ. Վազգեն քհն. Հովհաննիսյանը հոգեւոր սպասավորության է նշանակվել Սյունյաց թեմում, Տ. Նաիրի քհն. Գեւորգյանը՝ Հարավային Ռուսաստանի հայոց թեմում, Տ. Վիգեն քհն. Ղազարյանը՝ Գուգարաց թեմում, Տ. Երվանդ քհն. Բաբայանը՝ Խորվիրապի վանքում, Տ. Եղիշե քհն. Նազարյանը՝ Շիրակի թեմում, Տ. Աշոտ քհն. Սաֆարյանը եւ Տ. Միքայել քհն. Նուրիջանյանը՝ Արարատյան հայրապետական թեմում:

# Կարգալույծ է հռչակվել Տ. Գեղարդ աբեղա Վահունին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Գեղարդ աբեղա Վահունին՝ եկեղեցական ծառայությունից հրաժարվելու մասին խնդրագրի հիման վրա:

Կարգալույծ հռչակված հոգեւորականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը եւ կկոչվի ավազանի անունով՝ Վահե Վահունի:

# Հրատարակվել է «Ավետարանի գործող անձինք» աստվածաշնչագիտական բառարան

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչական բաժինը եւ Հայաստանի Աստվածաշնչային ընկերությունը լույս են ընծայել «Ավետարանի գործող անձինք» աստվածաշնչագիտական բառարան՝ աշխատասիրությամբ Մայր Աթոռի միաբաններ Տ. Ռուբեն աբեղա Զարգարյանի եւ Տ. Շահե աբեղա Անանյանի:

Բառարանում ընդգրկված են Ավետարաններում հանդիպող անձնանունները, նշված են համապատասխան ավետարանական տեղիները, բերված են գրաբար եւ աշխարհաբար հատվածները:

Բառարանը հրատարակվել է մեկենասությամբ Վլադիմիր Ենգիբարյանի եւ Բելա Ժամգարյանի:

*Լրատվական նյութերը՝*
*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ*

# ՍԲ ՂԵՎՈՆԴՅԱՆՔ, ՍԲ ՎԱՐԴԱՆԱՆՔ



*Սկիզբը՝ էջ 1*

Հար եւ նման քերթողահայր Խորենացուն, Եղիշեն եւս ողբում է, բայց այս ողբն այլ է. արյունով ու կենդանի նահատակությամբ հերոսացածների ու վկայությամբ մարտիրոսվածների վրա իր լուսալիր ճառագայթներն է նետում արեգակը՝ որպես երկնաբնակների, եւ իբրեւ «նահատակք պանծալիք» եւ «մարտիրոսք ցանկալիք», ինչպես գրում է շարականագիրը, երկնաքաղաքացիները տեսանելի ջերմությամբ գիրկընդխառն բռնում են հավերժի ճանապարհը՝ ավելի խորացնելով այն համոզումը, թե երկնի եւ երկրի միջեւ եւս մի Եկեղեցի գոյություն ունի, որտեղ էլ աղոթքով հանդիպում են զինվորյալ եւ հաղթական Եկեղեցու առաքյալները՝ մահվամբ միանալու եւ անմահությունն իբրեւ արդար իրավունքի զորության աղբյուր հռչակելու:

Հայ Եկեղեցու վարդապետն ամեն ինչ անում է՝ շեշտելու համար հավատքի ու դավանանքի կարեւորությունն ու միաբանության առավելությունները: Եվ եթե այսօր փորձ է նկատվում մի հարթության վրա դիտելու Վարդանին ու Վասակին կամ եւս առավել՝ արդարցնելու Վասակին՝ ի խնդիր Վարդանի, կարեւոր է հաշվի առնել հետեւյալը. Վարդանն ու Վարդանանք մեր Եկեղեցու սրբերն են, եւ այս իրողությունը ենթակա չէ կասկածի կամ ճշգրտման: Եվ երկրորդը՝ ոչ պակաս կարեւոր. Վարդանանք խորհուրդ ունեն, պատկերավոր արտահայտությամբ՝ իբրեւ լույս խավարի մեջ: Այս ամենից հրաժարվելը հավասարարժեք է մեր ինքնությունից հրաժարվելուն եւ կարող է նշանակել մեր անցած ճանապարհի մերժումը: Հետեւապես ազգային-եկեղեցական արժեքների նկատմամբ վերաբերմունքը կարող է եւ պետք է ցուցաբերվի համապատասխանաբար՝ երբեւէ երկրորդականը չնախադասելով առաջնայինից, ինչպես որ օրինակեցին հենց իրենք՝ Վարդանանք:

Ամեն պարագայում մեկ բան եւս անմերժելի է:

Սբ Ղեւոնդյանք եւ սբ Վարդանանք մեր ժողովրդի, մեր Եկեղեցու բարոյական իդեալների կրողներն են ու նահատակները: Հպարտ, «աներկյուղ, համարձակ», խաղաղասեր, որ իրենց մահվամբ ու ապրումով խորհրդանշում են ու կարեւորում մեր Եկեղեցու զավակների միասնության անհրաժեշտությունն ու առվելությունը: Այս է պատճառը նաեւ, որ թե՛ հայրենիքում, թե՛ Սփյուռքում հատկապես հարյուրամյակներ շարունակ մի առանձին շուքով է տոնախմբվում մեր քաջարի հերոսների ոգեկոչումն ու հիշատակը: Վարդանանք մեր ժողովրդի, հայ ազգի բարեխոսներն են ու բարոյախոսները՝ հար եւ նման մեր հավատքի Զորագլխին, ինչպես «Սբ Հավատամքի» մեջ ենք հաստատում, «մահուամբ զմահ կոխելով»՝ նոր շունչ, նոր առաքելություն ներբերեցին հանդեպ եւ ի սեր առ լեզուն, հայրենիքը, ընտանիքն ու քրիստոնեական հավատքը՝ հաղթական դուրս գալով եւ հանդիսանալով թարգմանները Աստծո խոսքի, եւ սա՝ ոչ պատահականորեն: Վարդանանք մեր ժողովրդի այն զավակներն են, որ իրենց ապրած կյանքով կենդանի քարոզ եւ անգերազանցելի օրինակ ապահովեցին առարկայականորեն՝ համաձայն Տիրոջ խոսքի թե՝ «Եթե հավատաք, ավելի մեծ գործեր պիտի կատարեք»: Վարդանանք, իիրավի, «կենդանի նահատակությամբ» համալրեցին Քրիստոսի ավետարանական հրավերը՝ «Եվ մարդն այնպես սիրեց Աստծուն, որ ինքն իրեն չխնայեց» (հմմտ. Հովհ. Գ 16): Կասկածի ենթարկել այս իրողությունը մեզ համար հավասարարժեք է ուրանալ Ճշմարտությունը:

Երեւակայել կարելի է, թե ինչպիսի անգերազանցելի օրինակ են ապահովել երեկ, այսօր ու հավիտյան մեր սրբազան նախնիք: Եվ փառք Աստծու, ինչպես պիտի նկատեր բանաստեղծը, որ մեր երեւակայությունը միայն ինքն իրենով չէ սահմանափակվում, «... որովհետեւ կյանքն- ի՜նչ էլ լինի- ընդլայնում է մեզ...» (Պ. Սեւակ): Որքան սերունդներ են դաստիարակվել այս անկործնչելի ճանապարհով: Նորապսակ հարսներն իրենց հետ, իբրեւ սրբություն, վերցրել են սբ Վարդանի կամ սբ Ղեւոնդի պատկերը, տղամարդիկ ռազմի դաշտ մեկնելիս ապավինել են նրանց բարեխոսությանը, եւ այսօր նոր խոսք ասելու պարագայում պարտքն է ամենքիս անմոռանալի՝ նախ եւ առաջ ըստ ամենայնի հաշվի նստել այս ամենի հետ: Մեր պատմության այն անմերժելի վկայություններից է, որը շահեկանորեն փաստում է եւ հաստատում, թե հոգեւորական եւ աշխարհական ուս ուսի եւ հավասարապես ռազմի դաշտ են մեկնել՝ որպես սրբազան ուխտի: «Զուգութիւն է մայր բարեաց, անզուգութիւն՝ ծնողն չարեաց»: Եվս մի կարեւոր հանգրվան. երբեւէ նկատելի չէ, որ մեզանում «հավատք եւ հայրենիք» սրբությունները առանձին-առանձին կենցաղավարելիս լինեն: Հայ մարդու համար հավատքը հայրենիքի մեջ է, հայրենիքը՝ հավատքի: Եվ ամեն անգամ ոգեկոչելով մահվամբ անմահացած մեր սրբազնասուրբ վկաների ու մարտիրոսների արժանի հիշատակը՝ արժե որ մենք էլ մեզ հարց ուղղենք. «Որքանո՞վ մենք էլ ծառայեցրինք մեր անձն Աստծուն ու մեր ժողովրդին, ավելացրի՞նք արդյոք մենք էլ այս աշխարհի լավն ու բարին, կարո՞ղ ենք մենք էլ ակնկալել այն բարեխոսությունը, որը նախ եւ առաջ ենթադրում է ազնիվ կամքի դրսեւորում՝ հանդեպ արդարի հիշատակը: Որովհետեւ արդարի հիշատակը սուրբ է, կենդանի ու պարտավորեցնող: Խունկ, լույս ու բյուր աղոթք օրհնության ակնկալիքով մեր նահատակաց արժանաժառանգ հիշատակին: Եվ թող մեծն Աստված հավիտյանս հավիտենից օրհնի այն ազգը, այն Եկեղեցին, որը երբեւէ չի մոռանում իր ծառայությունը, իր ինքնաընծայումն ու իր երախտարժան նահատակ-ննջեցյալներին, քանզի «մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»:

*Իսահակ աբղ. ՊՈՂՈՍՅԱՆ*

# ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԿԱՄ ՆԱԽԱՍՏԵՂԾՆԵՐԻ ԴՐԱԽՏԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

*Սկիզբը՝ էջ 1*

Մանրանկարներում արարչագործության առաջին օրը պատկերող տեսարաններում աշխարհը պատված է ջրով, եւ ջրերի վրա Հայր Աստված է, ինչպես որ Աստվածաշնչում է ասվում. «Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրա»: Աստված ահա այսպես՝ որպես լույս է ճախրում ջրերի վրա:

Երկրորդ օրն Աստված բաժանեց երկինքն ու երկիրը: Ինչպես որ արարչագործության առաջին օրվա համար ասվում է. «Եվ Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրա», այնպես էլ մանրանկարներում Աստծո շրջող Հոգին է աստվածության լույսի ոսկեղեղինով բաժանում երկինքն ու երկիրը:

Երկնքի ու երկրի բաժանումը մանրանկարների մեկ այլ խմբում արտահայտվում է ջրբաժան կամարով, ինչպես որ երկրորդ օրվա համար ասվում է. «Աստված տարածության ներքեւում եղած ջրերն անջրպետեց տարածության վրա եղած ջրերից»:

Աստված երրորդ օրը ցամաքն անջատեց ջրերից եւ ստեղծեց բուսական աշխարհը, որի համար երրորդ օրվա պատկերներում ջրային հորձանքն է եւ բույսերով պատված ցամաքը:

Աստված չորրորդ օրն ստեղծեց երկնային լուսատուները՝ Արեգակը, Լուսինը, ու մյուս մոլորակները եւ աստղերը: 13-րդ դարի մատենագիր Վարդան Արեւելցին գրում է, որ լուսատուների ստեղծմամբ ստեղծվեց եւ ժամանակը, քանի որ ժամանակը լուսատուների ընթացքն է:

Աստված հինգերորդ օրն ստեղծեց ջրային կենդանիներին, զեռուններին եւ թռչուններին, որոնք էլ պատկերված են այս օրը ներկայացնող տեսարաններում:





Արարչագործության պսակը դարձավ վեցերորդ օրը, երբ Աստված նախ ստեղծեց սողուններին ու գազաններին եւ ընդհանրապես՝ չորքոտանի բոլոր կենդանիներին, եւ ապա մարդուն: Եվ Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերով:

Ձեռագրային արվեստում վեցերորդ օրը եւ հատկապես մարդու արարումն ընդգծելու համար արարչագործության մյուս հինգ օրերը պատկերվում են բացվող ձեռագրի մեկ, իսկ վեցերորդ օրը՝ կից էջում:

Մարդու արարումը թեեւ հաջորդեց կենդանիների ստեղծմանը, սակայն, ինչպես որ մարդն է գերադաս եւ իշխանը ողջ կենդանական աշխարհի, այնպես էլ մի շարք մանրանկարներում՝ վեցերորդ օրվա պատկերներում, վերեւում Ադամի ստեղծումն է, իսկ ներքեւում՝ կենդանական աշխարհը: Տարբեր տեսակի եւ չափերի կենդանիների պատկերմամբ նկարիչը ցանկացել է ցույց տալ կենդանական աշխարհի ողջ բազմազանությունը:

Մարդու՝ Ադամի արարումը ներկայացվում է համաձայն Ծննդոց Գրքի երկրորդ գլխի, որում ասվում է. «Տեր Աստված մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դեմքին կենդանության շունչ փչեց, եւ մարդն եղավ կենդանի էակ»:

Աստվածային շունչ փչելը խորհրդանշում է ոչ միայն կենդանություն, կյանք, այլեւ բանականություն պարգեւելը: Ինչպես գրում է առաջին դարի հեղինակ Փիլոն Ալեքսանդրացին Ծննդոց Գրքի իր մեկնությունում, Ադամը ոչ միայն կենդանության, այլեւ բանականության շունչ ստացավ, եւ նրա գլուխը դարձավ մտքի տաճար:

Թե ինչու մարդուն վերջում եւ ոչ թե սկզբում ստեղծեց, Եղիշեն եւ հաջորդ մեկնիչները գրում են, որ ինչպես բոլոր պատրաստությունները տեսնում են եւ նոր են թագավորին կանչում եւ ոչ թե հակառակը, այնպես էլ Աստված նախ աշխարհին ստեղծեց կենդանիներով ու բույսերով եւ հետո նոր՝ մարդուն:

15-րդ դարի բանաստեղծ եւ մեկնիչ Առաքել Սյունեցին «Ադամգիրք» վերնագրված իր չափածո գործում, որը նվիրված է արարչագործությանը, Ադամի ու Եվայի արարմանը, ապա եւ դրախտից վտարմանը, Ադամի արարման համար տասը հատկանիշ է բերում.

Առաջին՝ Աստված Ադամին հողից ստեղծեց:

Երկրորդ՝ փչեց կենդանարար շունչ:

Երրորդ՝ բանական հոգի տվեց:

Չորրորդ՝ ստեղծեց արարչական Իր ձեռքերով:

Հինգերորդ՝ ստեղծեց ըստ Իր պատկերի:

Վեցերորդ՝ լուսափայլ մարմնով, որի լույսը խամրեց պտուղի ճաշակելուց հետո:

Յոթերորդ՝ փչմամբ նաեւ աստվածային շնորհը տվեց:

Ութերորդ՝ դրեց դրախտում:

Իններորդ՝ հրեշտակներից վեր դասեց, ինչպես որ Տնտեսի առակում է ասվում, թե մարդու որդիներն առավել են լույսի որդիներից:

Տասներորդ՝ իշխան կարգեց կենդանական աշխարհի, թռչունների եւ ջրային աշխարհի վրա:

Եվայի ստեղծման մասին էլ Աստվածաշնչում ասվում է, թե Տեր Աստված Ադամից վերցրած կողոսկրից կին արարեց:

Ինչպես որ Ադամի ստեղծումն է ներկայացվում մայր հողից վեր ելնող աճում, այնպես էլ Եվայի ստեղծումը՝ որպես բխում, ելնում Ադամի կողքից: Այսինքն՝ ոչ թե պատկերվում է կողոսկրից ստեղծվող Եվան, այլ Ադամի կողից ելնող ձեւավորվող Եվան:

Նման ձեւով պատկերումը պայմանավորված է Ադամ-Քրիստոս հետեւյալ զուգահեռով: Ինչպես որ Ադամը թմրեց, այնպես էլ Քրիստոսը՝ խաչափայտի վրա, եւ ինչպես որ Ադամի կողից ստեղծվեց նրա կինը՝ Եվան, այնպես էլ Քրիստոսի կողից բխած արյամբ՝ Քրիստոսի հարսը՝ Եկեղեցին:

Թե ինչու Աստված Եվային Ադամի նման հողից չստեղծեց, այլ նրա կողից, Գրիգոր Տաթեւացին տալիս է հետեւյալ խորհրդաբանական ու բարոյաբանական բացատրությունը: Աստված Եվային Ադամի կողից ստեղծեց, որպեսզի բոլոր մարդիկ իրար սիրեն՝ որպես մի հորից ծնված:

Ադամն ու Եվան անվանվում են ոչ թե ծնված, այլ արարված:

Ադամի՝ հողից, ու Եվայի՝ նրա կողից ստեղծվելուն նվիրված միջնադարյան մի շարք հանելուկներ կան, որոնք «Հայ միջնադարյան հանելուկներ» գրքում հրատարակել է Աս. Մնացականյանը: Դրանցից առաջինը վերագրվում է Անանիա Շիրակացուն: Այս հանելուկում ասվում է.

*Շարունակությունը՝ էջ 6*

## Ս. ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

# ՆԵՐԲՈՂ

## Ասված Քրիստոսի Ծննդյանը



*Սկիզբը՝ 2009 թ. թիվ 23-24, 2010 թ. թիվ 1-2*

Իսկ երբ ավարտվեց Նրա մարդեղության ժամանակի սահմանը, հաստատեց Իր անդամները, մարմինը լցրեց բանավորության զգայարաններով, Իր իմաստությամբ նկարեց Իր պատկերը եւ Իր Աստվածությանը միավորեց մարմինը, որ առավ Կույսից, եւ երբ ավարտվեցին Մարիամի հղության ինն ամիսները, ճշմարտապես ծնվեց Նա, Ով գոյացրեց Ադամին եւ Իր ծննդյամբ գերողից ազատեց արարածներիս: Եվ երբ կամենում էր կյանքի գրքում գրել Ադամին, [թագավորից] հրաման ելավ, որ մարդկանց գրում էր աշխարհի գրքում: Երկու՝ երկնավոր ու երկրավոր թագավորների հրամանները հանդիպեցին միմյանց. կայսրը գրում էր մարդկանց՝ իրեն հարկեր տալու, Աստծո Որդին Ադամի որդիներին գրում էր կյանքի գրքում: Մի թագավորը հնարներ էր մտածում մարդկանց իրեն պարտական դարձնելու, Մյուսը՝ ողորմում ու պարտականներին ազատում է պարտքերից:

Առաջին եւ նոր էր աշխարհագիրն այն, եւ նախնի եւ նոր էր փրկական ազատությունը, որ եղավ մեզ: Արտաքինով օրինակում էին ծածուկը եւ երկրավորով գուշակում էին երկնավորը: Ելան հրամանները, եւ յուրաքանչյուրին գրեցին իր գավառում. Ադամին գրեցին Եդեմում, քանի որ այն է նրա գավառը. նրա Տերը նրան գրեց փափկության դրախտում եւ մեծ քաղաքում՝ [նրա] առաջին բնակավայրում եւ այնտեղ ծանոթների մեջ պատվեց նրան: Եվ երբ կայսրը հրամայեց յուրաքանչյուրին գրել իր գավառում, [հրամանը հասավ] եւ Հովսեփին, որ ելնի՝ իր անունը գրելու Դավթի քաղաքում: Եվ նա, Մարիամին վերցնելով, գնաց Բեթղեհեմ:

Մարիամը, որ կրում էր Թագավորին, գնում էր թագավորների քաղաք, որ այնտեղ ծնի Նրան, Ով Իր հայտնությամբ մարդկանց գրելու էր կյանքի գրքում:

Երբ նրանք եկան Եփրաթա՝ Դավթի քաղաք, կույս Աստվածամոր ծննդյան երկունքը հասավ: Եվ քանի որ Բեթղեհեմում նրանց համար տուն չկար՝ իջեւանելու, նրանք գնացին քարափոր տուն՝ մի քարայր, եւ իջեւանեցին այնտեղ: Մեծատունն աղքատների հետ իջավ դատարկ տուն, Հզորը՝ տառապողների հետ՝ վեմի ծերպի մեջ, ծնվելիս նեղեց Իր մորը երկունքով եւ ցավով (իմա՛, ոչ ինչպես բոլոր ծննդկանները, այլ ազդմամբ եւ պատրաստությամբ կուսական ծննդյան՝ ըստ աստվածահրաշ խորհրդի), որպեսզի սուրբ Կույսը չկարծի, թե միայն հոգի է ծնում: Ամուլ ոչխարը ծնեց առյուծի կորյունին՝ զորություններից Հզորին, որի մասին գրեց Հակոբն իր օրհնության մեջ (տե՛ս Ծննդ. Խթ 9): Անբիծ աղավնին կանգ առավ եւ մանուկ ձագին՝ թռչունների թագավորին, հանեց փոքրիկ բնում: Երինջը կուսությամբ բազմեց՝ ծնելու պարարտ եզին, որ եկավ՝ մեղավորների համար ողջակեզ լինելու: Մանուկներին Ստեղծողը մարմնապես ծնեց Իր անձը, ելավ որովայնից, եւ ամբողջ մնաց կուսության կնիքը:

Աստվածային ու մարդկային է Նրա ծնունդը եւ չի բաժանվում, քանի որ սահմաններից վեր է: Աստվածային է, քանզի Կույսից ծնվեց Անհասանելին, եւ մարդկային է, քանզի մարմնացած ծնվեց Անքննելին: Մի է, Միածին Որդու մի ծնունդ՝ կատարյալ, բովանդակ, երեւելի, սքանչելի, տեսանելի, իմանալի, ծնված Հորից, անտեսանելի զվարթուններին, երկրպագելի մարդկանց, Էությունից ու մարդկությունից, մեկ Միածին՝ մեծությունից ու փոքրությունից, մեկ Փրկիչ՝ Բարձրյալից եւ Կույսից, մեկ Զորավոր՝ հրեղեններից եւ հողեղեններիցս: Մեկ Ամենակալ՝ ծածուկ՝ էությամբ, եւ հայտնի՝ մարդկությամբ:

Ո՞վ կհամարձակվի քննել Նրան. անծանոթ է բնությամբ եւ ճշմարիտ՝ մարդեղությամբ:

Ո՞վ կհամարձակվի քննել Նրան. լույս է հագել եւ դրվել է խանձարուրում:

Ո՞վ կսահմանի Նրան. բազմած է փառքի աթոռին եւ դրվել անասունների մսուրում:

Ո՞վ կարող է իմանալ Նրան. դողացնում է քերովբեներին եւ հագել է մարմին:

Ո՞վ կպատմի Նրա մասին. շարժում է բանական անիվներն ու վերցվել է Մարիամի գիրկը:

Ո՞վ կճառի Նրա մասին. հագեցնում է տոհմերին եւ սնվում է կաթով:

Ո՞վ է տեղյակ Նրան. ճոխանում է քերովբեական կառքերին եւ նստում է Մարիամի ծնկներին:

Ո՞վ հասու կլինի Նրան. զարհուրեցնում է քերովբեներին եւ հանձն է առել աղքատություն:

Ահա մեծ զարմանք. բխեցնում է անձրեւները եւ կաթ է ուտում ստինքներից:

Ահա հիացմունք. որոտեցնում է երկինքը, սարսափեցնում զորություններին եւ գգվում է մորից:

Ահա սքանչելիք. զվարթունները ծածկվում են, իսկ Հովսեփը երկրպագում է:

Ահա շնորհ. [երկնային] դասերը երգում են, եւ մարդիկ փառաբանում են:

Ահա խոնարհություն:

Օրհնեցին քերովբեներն ու սրբաբանեցին սերովբեները, գովեցին հրեշտակները, բարեբանեցին իշխանությունները, փառաբանեցին պետութունները, գոչեցին գնդերը: Ժողովվեցին լեգեոնները եւ իջան երկիր, փայլեցին հրեղենները, փչեցին հոգեղենները, երգեցին հազարներն ու բյուրերը՝ նորածին Արքային նոր օրհնությունները: Դղրդաց անապատը երկնավորների ձայներից, եւ զվարթունների փայլը ճեղքեց գիշերը, վառվեցին կրակներն ու պաշարեցին քաղաքը, ծագեցին լույսի շողերը, եւ խավարը նվաղեց: Իջան երկնային զորքերը եւ երկիրը երկինք դարձրին. երկնավորներն ու երկրավորները խառնվեցին իրար եւ փառաբանության պսակներ մատուցեցին մեծ Թագավորին: Գաբրիելյաններն ավետեցին ադամյաններիս, թե՝ արթնացե՛ք եւ սովորեցե՛ք նոր օրհնությունները: Քաղցրաձայն մեղեդիներով բարբառեցին Միքայելի դասերը եւ մարդկանց սովորեցրին իրենց օրհնության երգերը: Քերովբեների օրհնության ձայները զորությամբ գոչեցին, որպեսզի բացվեն մարդկանց փակված բերանները՝ փառաբանելու: Իբրեւ քաղցրաձայն փող՝ հնչեց սերովբեների սրբասացությունը, որպեսզի քնից արթնացնի մարդկանց որդիներին: Երգ հորինեցին երկնային զորություններն իրենց քնարներով եւ ասացին. «Փա՛ռք Աստծուն բարձունքներում, երկրի վրա խաղաղություն, իսկ Ադամին՝ հաշտության մեծ հույս» (Ղուկ. Բ 14):

Հրեշտակներն ընթացան եւ ավետեցին հովիվներին, թե՝ եկավ քաջ Հովվապետը՝ ժողովելու Իր ցրված բանական խաշներին: Ձեզ ավետում ենք մեծ ուրախություն. այսօր Դավթի քաղաքում ծնվեց ձեր Փրկիչը՝ օծյալ Տերը:

Նա Փրկիչն է, Ով բռնակալի ձեռքից պիտի հափշտակի գերվածներին եւ պիտի ազատի խավարային կապանքներով կապվածներին:

Նա Հզորն է, Ով Իր սպանմամբ պիտի վերադարձնի ավարը եւ Իր չարչարանքներով պիտի հաղթի թշնամուն ու հալածչին:

Ինչո՞ւ եք լռում, մարդի՛կ. ահա եկել է ձեր Թագավորը. գնացե՛ք, տեսե՛ք եւ երկրպագե՛ք Նրան: Հեզ է ու խոնարհ, չունի իշխանի փառավորություն: Սուսեր ու վահան չկա Նրա ձեռքին, պատերազմողների նման, եւ ո՛չ էլ զարդարված ձի՝ նրա տակ: Ձիեր ու ջորիներ չունի եւ Թագավոր է, արագընթաց նժույգներ չունի եւ իշխան է: Նրան կգտնեք խանձարուրով փաթաթված եւ մսուրում դրված. չերկբայե՛ք Նրա աղքատանման տեսքի պատճառով:

*Շարունակությունը՝ էջ 5*

# ՆՈՒՌ, ՆՌՆԵՆԻ



Նռնենին, իր ծաղկաբույլերի շառագունող գեղեցկությամբ, իր հյութեղ, թթվանուշ պտուղներով, բուժական հատկանիշներով, մարդկությանը հայտնի է դեռեւս անհիշելի ժամանակներից: Նուռն աշխարհի ամենախոշոր հատապտուղն է, հատապտուղ, քանզի նռնենիները, ի տարբերություն մնացյալ պտղատու ծառերի, թփեր են կամ էլ թփանման ծառեր: Ընձյուղները բարակ են՝ պատված փշերով, պտուղը, ինչպես նշեցինք, խոշոր է, գնդաձեւ՝ թեթեւակի նիստերով ու գլխամասում թագ հիշեցնող գավաթիկով, հաստ պտղամաշկում դասդասված է հյութեղ, թափանցիկ 400-800, ավելի խոշորներում՝ 1000-1200 հատիկ, որոնց «կույտերը» միմյանցից բաժանված են բարակ թաղանթավոր միջնապատերով: Նռնենիները հողի եւ խնամքի նկատմամբ քմահաճ չեն, սակայն արեւասեր են եւ շատ ցուրտ վայրերում չեն աճում: Նռնենու չորացրած ծաղիկներից պատրաստում են թեյ, որը ոչ միայն օգտակար է, այլեւ ունի խիստ հաճելի համ: Իսկ հատիկների թթվանուշ հյութը ծարավը հագեցնող հրաշալի ըմպելիք է: Նռան հյութն ու չորացրած հատիկներն օգտագործում են մի շարք ճաշատեսակներում, պտղամաշկից ու արմատներից պատրաստում են բուժիչ եփուկներ, այն նաեւ հրաշալի ներկանյութ է, օգտագործվում է նաեւ կոսմետիկ նպատակներով: Նուռը լայնորեն օգտագործվում է նաեւ գինեգործության մեջ:

Նուռն արեւելյան ժողովուրդների մոտ համարվել է բոլոր պտուղների արքան՝ ոչ միայն նրա՝ քիմքին հաճելի համի, բուժիչ հատկությունների, այլեւ նռան գլխամասում գտնվող թագանման հավելույթի պատճառով՝ այն ամենեւին պատահականություն չդիտելով: Տեսակետ կա, որ արքայական թագի նախատիպը հնում վերցրել են նռան «թագից»:

Մերձավոր ու Միջին Արեւելքին նուռը հայտնի էր դեռեւս Ք. ծ. ա. 12-7-րդ դդ.: Մեծ համբավ ուներ կարթագենյան նուռը: Այս պատճառով էլ հին հռոմեացիները նուռը կոչեցին Malum punicum «կարթագենյան (փյունիկյան) խնձոր» եւ malum granatum «հատիկավոր խնձոր» անվանումներով: Վերջինս հետագայում ավելի մեծ տարածում գտավ եւ շատ ու շատ ժողովուրդներ փոխ առան հենց «granatum» տարբերակը (անգլ.- pomegranate, գերմ.- granatapfel, իտալ.- melograna, իսպ.-granada, ֆր.- granade, ռուս.- гранат եւ այլն): Իսկ պարսկերենում, ինչպես նաեւ պարսկալեզու մյուս ժողովուրդների մոտ նուռը կոչվում է անար (anar), որը նշանակում է կարմրահատ, հրակերտ, հրահատ: Ի դեպ, կարծիք կա, որ նռան հայրենիքը հենց Պարսկաստանն է: Իսկ հայերեն «նուռն» բառը, ըստ Մագիստրոսի, առաջացել է «կուռ» բառից, ինչը Հ. Աճառյանը հավաստի չի համարում:

Նուռը վաղնջական ժամանակներից ի վեր ունեցել է նաեւ առանձնահատուկ ու հարուստ սիմվոլիկա: Դա մեծապես պայմանավորված է եղել նռան գունային երանգներով (մուգ մոշագույնից մինչեւ բաց կանաչավարդագույն), յուրօրինակ ծավալաձեւով, բազմահատիկների «ճարտարապետական» կառուցվածքով ու միասնականությամբ:

Ըստ հին հույների՝ նռնենին աճել է բուսականության աստված, խաղողագործության ու գինեգործության հովանավոր Դիոնիսոսի արյան միջից, փյունիկեցիների համար ունեցել է կենաց ծառի խորհրդանիշ: Նուռը՝ որպես պտղաբերության, մաքրագործության խորհրդանիշ, բուդդիզմի երեք սրբազան պտուղներից մեկն է՝ ցիտրուսների եւ դեղձի կողքին: Նուռը ձոնված էր հունական սիրո եւ գեղեցկության աստվածուհի Աֆրոդիտեին (հռոմ. դիցարանում՝ Վեներա), ինչպես եւ մայրության եւ հողագործության աստվածուհի Հերային (Յունոնա): Սկանդինավյան ժողովուրդների ավանդության մեջ նուռն է համարվում դրախտի արգելված պտուղը:

Նուռը պտղաբերության, առատության, մեծահոգության, մաքրագործության (իսլամում) ընդհանրական խորհրդանիշ է: Նուռը գլխին «թագ» ունենալու պատճառով համարվել է նաեւ իշխանության նշան, իսկ պտղի՝ հաստ կեղեւի մեջ պարփակված բազմաքանակությունը խորհրդանշել է տիեզերքը՝ մոլորակներով ու աստղերով:



Նռան սիմվոլիկան բավականին տարողունակ է նաեւ քրիստոնեության մեջ. այն մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խորհրդապատկերն է՝ Իր՝ գավաթում հեղված արյամբ, իսկ կերպարվեստում, երբ պատկերել են Տիրոջը՝ նռով, արտահայտել են Քրիստոսի հարության գաղափարը: Նուռը խորհրդանշում է Աստծո շնորհների բազմազանությունը, Եկեղեցին՝ իր բազմաթիվ հոտով:

Նուռը, ե՛ւ իր հորհրդանշական իմաստով, ե՛ւ որպես ազգային զարդամոտիվ, լայն տարածում է ունեցել հայկական ճարտարապետության, գորգագործության, կիրառական արվեստի մնացյալ տեսակների եւ մանրանկարչության մեջ (Գրիգոր Խլաթեցու, Թորոս Տարոնացու, Թորոս Ռոսլինի նկարազարդած, Հաղպատի եւ այլ Ավետարաններ): Հայ Եկեղեցու խորանների մեկնություններում նռնենիները մեկնվում են իբրեւ մարգարեների խումբը, որոնք առակի նման, իրենց հյութ ու դառը կեղեւով ծածկում էին քաղցրության Ավետիսը, անմահության պտուղը՝ Քրիստոսին:

Նուռը՝ որպես Հայաստանում տարածված պտուղներից մեկը եւ որպես հետաքրքիր ծավալաձեւ, մշտապես գրավել է հայ նկարիչներին ու քարագործ վարպետներին, իսկ որպես բանաստեղծի, ստեղծագործող անհատի հոգեկան աշխարհի բազմանիստ արտահայտություն՝ տեղ գտավ նաեւ Սերգեյ Փարաջանովի հանրահայտ ֆիլմում: Արդի հայ կիրառական արվեստում, որպես հայկական հուշանվեր, մեծ տարածում ունեն փայտից եւ կերամիկայից պատրաստված նռան նմուշները, քիչ չեն նաեւ արծաթե զարդանախշերը:

Հայաստանում նուռն ինչպես անցյալում, այսօր եւս կիրառվում է բուժական նպատակներով, իսկ նռան գինին մշտապես իր ուրույն տեղն է ունեցել եւ ունի հայկական գինեգործության մեջ:



# ԹԼԿՈՒՐԱՆՑՈՒ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ ԵՐԿՈՒ ՏԱՂԵՐԸ

*Սկիզբը՝ թիվ 2*

Իսկապես, Թլկուրանցին վրիժառու աղջկա պարը պատկերել է մեծ վարպետությամբ՝ արտակարգ տպավորիչ դարձնելով ոչ միայն պարի տեսարանը, այլեւ տաղն ամբողջությամբ: Հատկապես հետաքրքիր եւ ուշագրավ է Հերովդիայի դստեր զգեստավորման ու զարդարվելու տեսարանը, որը նույնպես, թերեւս, գալիս է ոչ թե գրական աղբյուրներից, այլ կենդանի տպավորության արդյունք է.

***«Չաչքն եւ զուներըն թըխացոյց***
***Չերեսն օծեց դեղ դիւական»:***

Իսկ աղջկա սպանվելու տեսարանը բանաստեղծը նկարագրում է այդ ոճրագործության ու մեղկ պարի արժանի վախճանը ցույց տալու համար: Ե՛վ այս վերջին նկարագրությունները, ե՛ւ Հերովդիայի մահվան, ե՛ւ Հովհաննես Մկրտչի գլխի եւ մարմնի ամփոփման տեսարաններն այնպիսի գեղարվեստական պատկերներ են, որոնք բացակայում են աստվածաշնչյան դրվագում եւ ստեղծված են Թլկուրանցու բանաստեղծական վառ երեւակայության ու տաղանդի ուժով: Այս տաղը հիշեցնում է Օսկար Ուայլդի «Սալոմեն», որն ի վերջո հասնում է իր ցանկությանը՝ համբուրում է գլխատված Յոքանանին եւ սպանվում:

Աստվածաշնչյան թեմաներ մշակելով՝ Թլկուրանցին թերեւս նպատակ ուներ կապ ստեղծել Եկեղեցու եւ ժողովրդի միջեւ, քանի որ այդ շրջանում Եկեղեցուց ուծանալու միտում էր զգացվում: Սուրբ Գրքի բովանդակությունն ավելի մատչելի ու հետաքրքիր դարձնելու համար Մագիստրոսը, Շնորհալին եւ նրանց հետեւությամբ՝ Թլկուրանցին մշակում են նրա առանձին դրվագները, որպեսզի հասարակ մարդը հետաքրքրություն հանդես բերի եւ ընտանենա Աստվածաշնչին: Դրա լավագույն ապացույցը նաեւ Թլկուրանցու «Տաղ Արարածոցն» է *(«Արարածոց Տաղաչափեալ Մեկնութեան» մեզի ծանօթ հնագոյն օրինակն գրուած է 1485-ին եւ կը գտնուի Ս. Յակոբեանց թիւ 1647 բոլորգիր ժողովածոյին մէջ» (տե՛ս* ***Ն. եպս Ծովական,*** Տաղգիրք, էջ Ձ), ուր նա չափածո վերաշարադրել է Աստվածաշնչի «Ծննդոց գիրքը», բանաստեղծական գեղեցիկ տողերով նկարագրել դեպքերը եւ իրադարձությունները: Բայց վիպական այս տաղը ոչ թե անմիջապես «Ծննդոց գրքի», այլ Վարդան Արեւելցու «Արարածոյի մեկնութիւնն»է՝ տողատված, վերածված չափածոյի եւ կազմում է մոտ 1600 տող: Թլկուրանցին իր տաղը բաժանել է հատվածների եւ կոչել շաբաթվա օրերի անուններով, որոնցից յուրաքանչյուրը պատմում է ըստ աստվածաշնչյան համապատասխան մասի նկարագրության:

«Մեկնութիւն Արարածոցը» *(բանասիրության մեջ կա նաեւ այն կարծիքը, թե Թլկուրանցին «Արարածոց մեկնութիւն» տաղի ոճով ու հանգով գրել է նաեւ Նոր Կտակարանի պատմություն (տե՛ս* ***Հ. Մ. Պուրուրյան,*** «Բազմավեպ», 1905, էջ 455), որը սխալ է), սկսվում է, այսպես կոչված, նախերգանքով, ուր բանաստեղծն իրազեկ է դարձնում իր ստեղծագործության նյութին եւ ընդգրկման սահմաններին.

***«Ես Յովհաննէս նուաստ ոգի,***
***որ մականունս Թուլգուրանցի,***
***Կամաւ իմով ի հոգ մտի***
***բանս ժողովել ինձ յիշելի.***
***Աստ կարճաբան հաւաքեցի,***
***յԱրարածոցըն Մովսեսի,***
***Մեկնեալ Վարդան Վարդապետի,***
***քաղեալ ի հարցն հոգելի»***

*(«Տաղգիրք», էջ 75: Որոշ ձեռագրերում այս հատվածը բացակայում է, եւ տաղն սկսվում է հաջորդ տողով՝* ***«Սկըսաւղն է սկիզբն սկըզբան, արարիր Աստուածն յաւիտեան»*** (նույն տեղում): Հետագայում մեջբերումները եւս այս տպագրից են):

Քնարական գեղեցիկ ու նուրբ պատկերներով բանաստեղծը նկարագրում է աշխարհի, մարդկանց ու կենդանիների ստեղծումը.

***«Երկիր էր աներեւոյթ, չեւ էր լոյս,***
***չեւ էր տեսական***
***Եւ ջուրըն ծածկէր զաշխարհըս,***
***չեւ էր մարդ ստեղծեալ յերեւան:***
***Եւ որ անպատրաստ ասէ՝ չեւ էր զարդ,***
***չեւ էր բուսական,***
***Ո՛չ ծառք, ո՛չ լերինք, ո՛չ դաշտք,***
***ո՛չ զեռունք եւ ո՛չ լողականք»:***

Սակայն ամենազոր եւ ամենակարող Աստծո Սուրբ Հոգին շրջում է՝ ամենուր կենդանություն ու լույս շնորհելով.

***«Եւ աստ ասաց Աստուած՝ եղիցի լոյս,***
***եւ սփըռեցան,***
***Եւ եւս գերագոյն բարին վըկայեաց***
***բարին բնութեամբ»:***

Եվ գթառատ Աստծո ամենակարող հրամանով ու ցանկությամբ ստեղծվում են երկիր ու երկինք, արեւ, լուսին ու աստղեր, գիշեր ու ցերեկ: Չափազանց գեղեցիկ ու պատկերավոր է արեւի եւ լուսնի նկարագրությունը:

***«Արեւն ի հոլով գընաց, եւ լուսինն ի սահ***
***սողըման,***
***Անմոլար մոլորականք՝ աստեղունք***
***ոստոստ ընթանան:***
***Արեգակն է լուսոյ ակն, եւ լուսինն է***
***երկու բերան,***
***Զլոյսն յարեգակնէն առնու, կամ***
***ծածկոյթ է բացխըփական»:***

Հատկապես հետաքրքիր են տաղում համարյա միշտ առկա հեղինակի բանաստեղծական մեկնաբանությունները, ինչպես՝

***«Խաւարըն չէ գոյութիւն, լոյսն է գոյ եւ***
***յոյժ պիտեւան,***
***Իւ պակասութիւն լուսոյ՝ տարերացն***
***ըստուերք զօրանան»:***

կամ՝

***«Մինչ չէր մեղանչէլ Ադամ, չունէին ոխ***
***թըշնամական,***
***Ինձ, առեւծն եւ գայլն եւ արջն ընդ***
***ոչխարսն էին միաբան»:***

Եվ այսպես Աստված հինգ օրում արարում է երկինք ու երկիր, կենդանիներն ու բույսերը, եւ արեւի պայծառ լույսով ողողված երկիրը լցվում է դյութիչ գեղեցկությամբ եւ աշխույժով: Իսկ

***«Ի վեցերորդումն աւուր՝ մարդասէր***
***Հայրըն գըթական,***
***Ասաց ընդ բնութեան Որդին, արասցուք***
***զԱդամ մեզ նման:***
***Արար Աստուած զմարդն Ադամ,***
***ի պատկեր իւր սուրբ տիրական,***
***Զոր ի վեց դարուն զգեցաւ ի Կուսէն***
***Որդին Հօր եւ Բան»:***

Այստեղ դարձյալ նկատելի է Թլկուրանցու անհատական մոտեցումը, որ այնքա՜ն նրբորեն է արտահայտվում ողջ ստեղծագործության մեջ.

***«Եւ ըստ պատկերի հոգոյն, մարդ հոգի է***
***անմահական,***
***Հոգին Սուրբ անքըննելի, նոյնպէս եւ***
***հոգիքն մարդկան»:***

Իսկ որքա՜ն ցավով եւ ափսոսանքով է բանաստեղծը պատկերում Ադամի ու Եվայի անզգույշ, ողջ մարդկության համար ճակատագրական դարձած քայլը.

***«Գիտութեան պըտուղըն խակ՝ ձեզ լինի***
***պատճառ մահըւան,***
***Մերկ էին Ադամ եւ Եւայ՝ անպատկառ եւ***
***անզգուշական:***
***Յետ մեղանչէլոյն ապա զմերկութիւն***
***իւրեանց գիտացան,***
***Չի մեղքըն զըղջալ բերէ թէ խոստովանել***
***գիտենան:***
***Դըրախտն անժառանգ մընաց, զի չունէր***
***զայլ ոք մնացական,***
***Ո՛հ թէ զինչ պատահեցաւ, վայ մարդկան***
***մեծի կորըստեան»:***

Եվ այսպես «անպատկառ եւ անզգուշական» Ադամից ու Եվայից ծնվում ու սկիզբ է առնում մարդկային ամբողջ աշխարհը: Գեղեցիկ ու մեղմ նկարագրություններով բանաստեղծը շարադրում է նրանց սերունդների պատմությունը եւ տալիս քնարական ինքնատիպ ու յուրօրինակ մեկնաբանություններ: Եվ ինչպես տաղերի մեջ, այնպես էլ այստեղ Թլկուրանցին իր պատմությունն ավարտում է բոլորին ուղղված բարեմաղթանքով.

***«Յաւարտման այսըմ բանիս***
***շարադրական,***
***Որ յոլովից եւ ի բազմաց կարճ գըրեցան,***
***Վայելէ Հօրն անեղին եւ անըսկըզբան,***
***Անեղ Որդւոյն, որ է ծընունդ Հօր***
***բընութեան.***
***Նոյնպէս եւ Հոգւոյն Սըրբոյ անճառական,***
***Երգեսցուք փառք եւ պատիւ այժմ***
***յաւիտեան:***
***Եւ զանարժան եւ զեղկելիս թափառական***
***ԶԹուլգուրանցիս միշտ յիշեցէք հարք***
***պատուական»:***



Այս մեկնողական բնույթի վիպական տաղը, թեմայի առումով լինելով աստվածաշնչյան, կատարման առումով միանգամայն ինքնատիպ բանաստեղծական հորինվածք է: Ընդ որում, համարյա ամենուրեք դրսեւորվում է Թլկուրանցու հուզական վերաբերմունքը, ինչը քնարական որոշակի երանգ է հաղորդում նյութին: Ի դեպ, այդպիսի մոտեցում բանաստեղծն ունի իր գրեթե բոլոր վիպական տաղերում, որոնցում թվում է, թե սյուժեների հանրահայտ բնույթը թույլ չպիտի տար երեւան հանելու սեփական վերաբերմունքը: Դա նշանակում է, որ տաղերգուն իրեն կաշկանդված չի զգում ստեղծագործելիս եւ ունի թեթեւ ոճ ու դյուրաշարժ գրիչ:

***Վարդան ԵՂԻԱԶԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ***

---

## Ս. ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

# ՆԵՐԲՈՂ

## Ասված Քրիստոսի Ծննդյանը

*Սկիզբը՝ էջ 4*

Հովիվներն իրենց խաշների հետ ցնծացին ավետիսից, անբիծները հավատացին եւ իրենց ընծաներն առնելով՝ գնացին Նրա մոտ: Արդարներն ընտրեցին, ուղիղները տասանորդ տվեցին՝ մատուցեցին իրենց ընծաները՝ գառը՝ իբրեւ Քահանայի, կաթը՝ իբրեւ ծծկեր Մանկան, եւ փառքը՝ իբրեւ Աստծու: Առաջին ընծաները Նրան մատուցեցին հովիվները. նրանք իրենց ընծաներով մտան քարայր եւ երկրպագեցին Նրան: Մաքիների գառ մատուցեցին Աստծո Գառին, Ով եկավ՝ լինելու զենումն եւ պատարագ Աստծուն եւ դադարեցնելու (Հին Ուխտի) գառների զոհաբերությունը: Հովիվները խառնվեցին հրեշտակներին եւ փառաբանեցին Նրան: Մեծ սքանչելիք եղավ, քանզի երկնավորների ձայները միացան երկրավորների ձայներին, եւ անմարմինների երգերը՝ մարմնավորների երգերին: Եվ բոլոր բերաններից ելնող փառաբանությունները միաբանեցին երկինքն ու երկիրը՝ երգելու օրհնությունները մեկ Միջնորդի, Ով հաշտեցրեց նրանց Իր ծննդյամբ: Մանուկը լուռ էր, իսկ հույլերը զարհուրում էին, ձայները բարձրանում էին, զվարթունները՝ բարբառում, մարդիկ՝ գոհանում, քարայրը՝ փոքր, մսուրը՝ աղքատիկ, Հովսեփը՝ ուրախացած, Մարիամը՝ զարմացած, եւ Որդին՝ աղքատացած:

Մարիամը, այս սքանչելիքը տեսնելով, իրեն քաջալերեց, եւ երկունքն ու ցավերը հեռացան նրանից, ոտքի կանգնելով եւ խոնարհվելով իր Որդու առջեւ՝ երկրպագեց Նրան, ընկավ Նրա առջեւ, ծնողական սիրով աղոթեց եւ ասաց. «Տե՛ր իմ եւ Որդի՛ իմ, հրամայի՛ր Քո աղախնուն ու մորը՝ խոսելու Քեզ հետ: Արձակի՛ր լեգեոններին, որ գնան Քո երկիրը, քանզի այնտեղ ես, սաստի՛ր հրեղեններին, որ ինձ տեղ տան՝ մոտենալու Քեզ: Ասա՛ սերովբեներին, որ բարձրացնեն իրենց թեւերը, որպեսզի Քեզ մոտ գամ: Թո՛ւյլ տուր, որ կուսական կաթս հասնի Քո բերանին, շնորհիր ստինքներիս, որոնց սնուցեցիր, որ սնուցեն Քեզ:

Երկնավորների գոչյուններից պատռվեց երկիրը, հրամայի՛ր նրանց՝ հավաքելու [երկնային] լուսեղեն առագաստն բարձանց:

Տո՛ւր իմ ձեռքերին քերովբեների զորությունը, որպեսզի կարող լինեն բարձրացնել Քեզ:

Պարգեւի՛ր իմ լեզվին սերովբեների սրբասացությունը, որպեսզի իմ բերանը անդադար սրբ[ասաց]ություն երգի Քեզ:

Տո՛ւր իմ ծնկներին բանական անիվների կարողությունը, որպեսզի կարող լինեն շարժելու մեծությանդ:

Տո՛ւր ինձ զորություն, քանզի Քո զորությունը չեմ կարող տանել:

Դո՛ւ պատվիր Քեզ, քանզի եւ երկինքը չի կարող տանել Քեզ:

Քո ծննդյան այս օրը թող ցնծա՛ երկիրը իր ամբողջությամբ եւ փշերի փոխարեն բարի բերք բուսցնի:

Այսօր թող ուրախանա՛ Ադամը՝ տոհմերի նախահայրը, քանզի Աստծուն ընդունեց իր ծնունդից, ինչպես ցանկացավ:

Այսօր թող Եվան ցնծա առավել, քան Ադամը, քանզի նրանից ծնվեց Մանուկ, Ով լուծեց նրա անեծքի ցավը:

Այսօր թող ուրախանա՛ դրախտը ծառերի հետ միասին, քանզի հեռացած դրախտապանը վերադարձավ դեպի Իր ժառանգությունը:

Այսօր թող ցնծան բոլոր հեթանոսները, որոնք ցրված էին ամբողջ աշխարհում, քանզի Քեզնով հավաքվեցին:

Այսօր Հեսսեի արմատից բուսեց ճյուղը, Ով քաղցր գինի է խմեցնում ծարաված հեթանոսներին:

Այսօր հաստատուն դարձավ երերուն ոտքը, եւ զորացավ թուլացած գարշապարը:

Այսօր գերված հեթանոսները խաղաղությամբ վերադարձան, եւ ամուլը բազում ծնունդներ ունեցավ:

Այսօր թող ուրախանա՛ն մարգարեների գնդերը, քանզի Քո ծննդյամբ իրագործվեցին նրանց խոսքերը:

Այսօր Քո հայր Դավիթը թող կարգավորի՛ իր տասնալարյան [նվագարանի] լարերը եւ նոր երգեր երգի Քո ծննդյանը:

Այսօր թող Եսայիին գերեզմանում ազդարարվի՛, որ ահա իմ առջեւ է Էմմանուելը, Ում մասին մարգարեացավ ինքը:

Այսօր թող փառաբանի՛ Ամովսի որդին, քանզի ծնեցի Մանկանը եւ կույս մնացի, ինչպես որ գրեց ինքը:

Այսօր առավե՛լ թող ցնծա Զաքարիա մարգարեն, քանզի Դու ես այն Այրը, Ում անունը ծագումն է, ինչպես ասաց ինքը (տե՛ս Զաք. Գ 8):

Այսօր թող ծագի՛ Քո լույսը մարգարեների գերեզմաններում եւ արթնացնի՛ նրանց իրենց փառավորված քնարներով:

Այսօր թող ուրախանա՛ Քո հայր անվանվող Հովսեփը, ով քեզ համար շատ նախատվեց եւ արժանացավ տեսնելու Քո փառքը:

Այսօր, երբ ես ծնեցի Քեզ, բարձրացավ Քո փառաբանությունը, քանզի երկնավորներն ու երկրավորները երգեցին նոր օրհնությունը»:

Այսօր Մարիամը՝ անբիծ աղավնին, այսպիսի խոսքեր ասաց իր սիրելի Որդուն, եւ նրա գգվանքի խոսքերը միավորվեցին հրեղենների երգերին: Նրա ձայնը խառնվեց սերովբեների սրբասացությանը, եւ նրա երգը հաղթեց բոցեղենների որոտումներին, քանզի գորովով լի էր օրհնաբանում իր սիրելի Որդուն: Կույսի քնարը հնչեց՝ միավորվելով հրեշտակների հետ, քանզի նա կուսությամբ եւ սրբությամբ հաղորդակից էր նրանց:

Նորոգվեց մեղքերից հնացած երկիրը, Աստծո Որդու ծննդյամբ վերստին ստեղծվեց: Այսօրվա փառքը մեծ է, քան բոլոր օրերինը, եւ այս տոնի պայծառությունը հրաշալի է, քան բոլոր տոներինը:

*Շարունակությունը՝ էջ 8*

Կից սենյակում

# «ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» զրուցաշար

## ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

- Մարդ անհատի, ընտանիքի, նաեւ հասարակության, որեւէ ազգի իրական առաջադիմության եւ առողջության կարեւոր չափորոշիչը բարոյականությունն է, եւ այս առումով նրա անմիջական առնչությունը կրոնի հետ ընդհանրապես եւ մասնավորապես՝ քրիստոնեության, անժխտելի իրողություն է: Ըստ Գարեգին Ա Հովսեփյանց Հայրապետի՝ մարդկային գերական գաղափարների (իմա՝ իդեալների) շարքում ամենաբարձրը բարոյական իդեալն է: Իսկ մեկ այլ առիթով նա ասում է. «Անբարոյական սկզբունքներով առաջնորդվող քաղաքակրթության հետեւանքը մահն է»:

**Տե՛ր հայր, կարելի՞ է հետեւություն անել, որ ասվածը նույն չափով վերաբերում է նաեւ հասարակության մեկ կարեւոր բջջին՝ ընտանիքին:**

- Անկասկած: Երբ Աստված մարդուն արարեց եւ առաջին ընտանիքը կազմավորեց, միաժամանակ նրանց օժտեց բնական իրավունքներով ու պարտականություններով, Իր պատկերով ու նմանությամբ ստեղծած արարածին պարգեւեց խիստ որոշակի մտավոր կեցվածք ու հոգեկերտվածք: Սրանց ամբողջությունն էլ հենց բարոյականության չափորոշիչն է. մարդը պիտի ապրեր այնպես, ինչպես Աստված կամեցավ տեսնել Իր արարչագործության պսակին: Սակայն մարդու մեղանչման հետ խաթարվեց նաեւ աստվածադիր բարոյականությունը, ինչը շարունակում է իր այլազան դրսեւորումներով ավերածություններ գործել նաեւ այսօր: Բայց անկասկածելի է, որ Աստված ամեն մարդու հոգու մեջ դրել է բարոյականության հունդերը, բարոյականի ճշմարիտ ընկալումը:



**- *Բարոյական սկզբունք, բարոյական չափանիշներ, բարոյական արժեքներ.* այս եզրերը, կարծեմ, անփոփոխելի են քրիստոնեական վարդապետության մեջ: Բարոյականության աշխարհիկ ընկալումները, սակայն, անհամեմատ տարբեր են. շատ երեւույթներ, որոնք անընդունելի, ավելին՝ դատապարտելի էին համարվում, ասենք, 100 տարի առաջ, այսօր չեն դատապարտվում, անգամ խրախուսվում են հանրության կամ դրա որոշ շերտերի կողմից...**

- Պատմությանը ծանոթ են նմանատիպ փոփոխությունները հասարակության հոգեւոր եւ բարոյական ընկալումներում, ընդ որում, երկու ուղղությամբ էլ՝ ե՛ւ վերընթաց, ե՛ւ վայրընթաց: Առաջին դեպքում, երբ հասարակությունը հավատքով զորացած է եղել, տեղի է ունեցել աստվածադիր բարոյական չափանիշների վերականգնում, առողջացում: Մյուս դեպքում, երբ մարդկանց սրտերում երերացել են հավատքն ու սրբությունները, մեծապես տուժել է նաեւ բարոյականությունը: Նման մի հարված չէ՞ր արդյոք անաստվածության շրջանի հասարակությունը՝ մինչեւ օրս իր կենսունակությունը չկորցրած աղետալի հետեւանքներով: Հոգեւոր արարողությունների ժամանակ՝ մկրտություն, պսակ, հուղարկավորություն, սովորաբար ցանկանում եմ, որ «Հայր մեր» աղոթքը միասին ասենք, եւ ցավոք, քիչ չեն դեպքերը, երբ որեւէ մեկը ինձ հետ չի աղոթում: Իրենց քրիստոնյա համարող այդ մարդկանց մեծ մասը հազար տեսակի հայհոյանք կասի, բայց մի աղոթք չի ասի... Հոգեւոր գիտակցությունից հեռացած մարդու մեջ սասանվում է սրբությունը: Իսկ եթե սասանված է գլխավոր Սրբությունը՝ Աստված, բարոյականության սասանումն ու աղճատումը դրա ընդամենը տրամաբանական հետեւանքն են: Եթե արմատին ես հարվածում, ճյուղերը, բնականաբար, պիտի թոշնեն ու չորանան, որովհետեւ ճյուղերն արմատի՛ց են սնվում: Այսօր շատերն են բողոքում ծնող-զավակ հարաբերությունների, մեղմ ասած, անկատարությունից: Է՜հ, զավակը ո՞նց հասկանա, սիրի ու հարգի ծնողին, եթե չգիտի, որ Աստվա՛ծ պարգեւեց այդ ծնողին: Նույնը՝ ծնողի պարագայում: Այս դեպքում մենք գործ ունենք «մահամերձ» քրիստոնեության հետ: Չկա մեկը, Քրիստոսի անունը լսած չլինի, չկա ընտանիք, որտեղ մկրտության մասին չխոսվի կամ Աստվածաշունչ չլինի... Այսինքն՝ նվազագույն շնորհ, կարծես թե, կա ամեն ընտանիքում: Բայց դա շատ քիչ է: Շնորհը պիտի աճի, իսկ աճն աստվածպաշտությամբ ու աղոթքով պիտի լինի: Միայն այդ պարագայում կարող է վերականգնվել, վերակենդանանալ ճշմարիտ բարոյականությունը:

**- Եկեղեցու վարդապետները հաճախ են նույնացնում *անհավատություն* եւ *անբարոյականություն* եզրերը: Կարելի՞ է ասել, որ միայն առ Աստված դառնալով է հնարավոր վերագտնել բարոյական նկարագիրը:**



- Միանշանակ է, որ աստվածպաշտությունը վերանորոգում է մարդու բարոյական կերպարը: Սա կարող ենք փաստել ինչպես այլոց, նույնպես եւ մեր իսկ տկար անձի օրինակով: Ասենք՝ մենք հայհոյում ենք կամ չենք հայհոյում: Ինչո՞ւ: Ո՞վ համոզեց 16 տարեկան մի պատանյակի չհայհոյել այն դեպքում, երբ շրջապատում գրեթե բոլորը հայհոյում են. միանշանակ՝ աստվածպաշտությունը, հավատքը, սրբությունը... միմիայն հավատքից է գալիս համատարած անբարո մթնոլորտում չսայթաքելու զորությունը:

**- Տե՛ր հայր, ասում են, որ անհավատ մարդիկ նույնպես կարող են բարոյական բարձր արժեքներ դավանել...**

- Խնդիրն այն է, որ մերօրյա իրականության մեջ չափազանց դժվար է զանազանել *հավատավոր* եւ *անհավատ* եզրերը: Շատերը ծածուկ ձեւով հավատավորին հատուկ կյանք են վարում: Ոմանք էլ բոլորի աչքին երեւցնում են, թե իբր հավատավոր են, բայց իրականում հավատքի հետ ոչ մի կապ չունեն. ընդամենն ինչ-ինչ շահադիտություն կա, ուրիշ ոչինչ: Մաքուր հավատքը մշտապես ունի մեծ զորություն եւ բարոյական ամուր հիմք: Իրենց անհավատ համարող շատ մարդիկ կան, որոնց հոգում աղճատված է հավատքի դավանությունը, բայց հավատքի հիմքերը դեռեւս ամբողջությամբ քանդված չեն: Սակայն այսպիսի մարդկանց բարոյականությունը տանիք չունի եւ մշտապես ենթակա է քայքայման:

Բարոյականությունը սնող կարեւորագույն հանգամանք է ինքնազոհողության, ինքնազրկման դրսեւորումը: Միայն մեկ օրինակ բերեմ. ընտանիքի հայրը երբեք չի կարող իր ընտանիքին հավատարիմ լինել, եթե ինքնազրկմամբ իր համար չբացառի շնությունը:

**- Տե՛ր հայր, ինչպե՞ս կարող եք բացատրել այն դեպքերը, երբ ամեն մի աննշան առիթ ընտանիքի քայքայման պատճառ կարող է դառնալ:**

- Որեւէ աննշան առիթ, նույնիսկ լուրջ առիթ, անգամ վեճ ու կռիվ, որից ապահովագրված չէ ոչ մի ընտանիք, չի կարող ընտանիքի քայքայման պատճառ դառնալ, եթե այն կառուցված է բարոյական ամուր եւ առողջ հիմքի վրա, ինչն արդեն իսկ մեծ շնորհ է տվյալ ընտանիքի համար: Եվ մեծապես սխալվում են նրանք, ովքեր ընտանիքների քայքայման հիմնական պատճառները փորձում են փնտրել նյութական անապահովվածության մեջ եւ կայուն ընտանիքի գրվական համարում ունեցվածքը, հարստությունը... Ես գիտեմ շատ մեծահարուստների, ովքեր իրենց զավակների նորաստեղծ ընտանիքներին հատկացնում են մեծ գումար, շքեղ բնակարան, մեքենաներ եւ այլն: Մի կողմից դա շատ լավ է. մարդը կարողություն ունի եւ այն ի սպաս է դնում իր զավակի համար: Բայց շատ հաճախ հենց այդ ապահովված ընտանիքներն են անհաջողակ դուրս գալիս, եւ մարդիկ սկսում են զարմանալ՝ ի՞նչ պատահեց, ինչո՞ւ այդպես եղավ, չէ՞ որ ամեն ինչ ունեին... Իսկ այդպես եղավ, որովհետեւ իրենց ամբողջ հույսն այդ գումարն էր, նյութն էր: Նյութը՝ ունեցվածքը, ինքնին ամուր բարոյական հիմք չի կարող ապահովել, որքան էլ որ այն շատ լինի: Այն ընդամենն ապրելու եւ բարիք գործելու միջոց պետք է լինի մարդու համար: Սակայն երբ նյութը մարդու ամբողջ հոգեբանության ու մտածողության մեջ բարձրագույն դիրք է գրավում, այլեւս անկումն անխուսափելի է դառնում: Եվ սրա կողքին տեսնում ենք բազմաթիվ ընտանիքներ, որտեղ փոխադարձ համաձայնությամբ, հանդուրժողականությամբ, սիրով, համբերությամբ, իրար օգնելու վճռականությամբ մարդիկ կարողանում են հաղթահարել կյանքի ցանկացած դժվարություն, նույնիսկ հետին աղքատություն, եւ հոգեբանորեն ու բարոյապես կայուն մնալ: Եվ գիտե՞ք ինչու: Որովհետեւ սրանց հույսն Աստված է:

*Շարունակությունը՝ էջ 7*

# ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԿԱՄ ...

*Սկիզբը՝ էջ 3*

**«Ծնվեցի առանց հոր,**
**Եվ իմ կինը ծնվեց ինձնից,**
**Եվ իմ դուստրը ծնեց իմ Հորը»:**

Այս եւ մի շարք նման հանելուկների բացատրությունում ասվում է, որ Աստված Ադամին արարեց հողից, Եվան ծնվեց նրա կողից, իսկ Ադամի սերունդներից՝ սուրբ Կույսից, ծնվեց Աստծո մարդեղացած Որդին:

Համանման ձեւով մեկ այլ հանելուկում Ադամի ու Եվայի համար ասվում է.

**«Չէին ծնվել եւ մեռան»:**

Ադամի կողից Եվայի ստեղծման հայկական հնագույն եւ լավագույն մանրանկարներից է Անանուն անվանվող Սյունեցու նկարազարդած Ավետարանի պատկերը, ուր ներկայացված է այն պահը, երբ Աստված թմրություն է իջեցրել Ադամի վրա, եւ նրա բացված կողից աստվածային Աջով ստեղծվում, վեր է ելնում Եվան:

Այստեղ Ադամն ու Եվան գտնվում են դրախտի պայծառ ու գեղեցիկ համապատկերում, հրեշտակների փառաբանության ու օրհներգությունների ներքո, իսկ կենտրոնում կենաց ծառն է, որի վրա նստած են դրախտի կախարդական թռչունները:

Այս Ավետարանում Անանուն Սյունեցին ներկայացրել է եռամաս կառուցվածք ունեցող դրախտային հետեւյալ պատկերաշարը:

Առաջին՝ Եվայի ստեղծումը:

Երկրորդ՝ մեղսագործությունը՝ արգելված պտղի ճաշակումը Ադամի ու Եվայի կողմից:

Երրորդ՝ իմացության պտուղի ճաշակումից հետո Ադամի ու Եվայի երկնչելը եւ թաքնվելը Հայր Աստծուց:

Այս երեք մանրանկարներում էլ Հայր Աստված պատկերված է Քրիստոսի նմանությամբ, քանի որ մինչեւ 16-17-րդ դարերը Սուրբ Հոգին եւ Հայր Աստված մարդկային անձնավորմամբ չէին ներկայացվում:

Համաձայն Ծննդոց Գրքի նկարագրության՝ դրախտը պատկերվում է դրախտային թռչուններով ու բույսերով, վառ եւ պայծառ գույներով, եւ ինչպես գրում է Փիլոն Ալեքսանդրացին, դրախտը ուրախության եւ զվարթության խորհուրդն ունի:

Վարդան Արեւելցին գրում է, որ դրախտում ամառ ու ձմեռ, գարուն եւ աշուն չկային:

Առաքել Սյունեցին դրախտն այսպես է պատկերում.

**«Փառքն դրախտն էր անպատմելի,**
**Չքնաղատես եւ սխրալի,**
**Ծաղկունքն տալիս էին փայլն փայլի,**
**Նման արեգակի եւ լուսնի»:**

Ըստ Ծննդոց Գրքի՝ պատկերվում են դրախտից ելնող չորս գետերը, որոնցից յուրաքանչյուրի կողքին գրված է նրա անունը՝ Փիսոն, Գեհոն, Եփրատ եւ Տիգրիս:

Խաչատուր Խիզանցու 1591 թ. նկարազարդած Ավետարանում դրախտի կենտրոնում կենաց ծառն է, որը բարձրանում է խաչադրոշմ վեմ սեղանի վրա, որից են սկզբնավորվում նաեւ դրախտի չորս գետերը:

Պատկերագրական նման կառուցվածքը հիմնված է կենաց ծառ-խաչափայտ զուգահեռի վրա, թե՝ Նոր Կտակարանում Քրիստոսի խաչելությամբ կենաց փրկության նոր ծառը դարձավ խաչափայտը:

Քրիստոսին խորհրդանշող խաչից դրախտի չորս գետերի բխելը դարձյալ կառուցված է Հին եւ Նոր Կտակարանների այն զուգահեռի վրա, որ ինչպես դրախտի չորս գետերը նյութականորեն ոռոգում են աշխարհը, այնպես էլ խաչից՝ Քրիստոսից բխող չորս Ավետարաններն են ոռոգում, հոգեւոր կենդանություն պարգեւում մարդկային հոգուն:

Աստված դրախտն ստեղծեց մարդու համար: Ինչպես Սյունեցին է գրում.

**«Ստեղծեց եւ դրախտն բարձրագույն,**
**Ծառ ու ծաղկունք դրախտում անհուն,**
**Պես-պես ձեւերով լուսափայլուն,**
**Որպեսզի բնակություն լինի մարդուն»:**

Հայ արվեստում, սկսած 10-րդ դարում կառուցված Աղթամարի Սբ Խաչ եկեղեցու հարթաքանդակից, դրախտի կենտրոնում՝ իմացության ծառի աջ եւ ձախ կողմերում, պատկերվում են Ադամն ու Եվան՝ որպես հրաշք, բայց եւ այժմ արդեն կորուսյալ մի աշխարհում: Նրանց հետ, սակայն, պատկերվում է եւ օձը՝ իր նենգ ժպիտով, որով գայթակղեց եւ խաբեց նախաստեղծներին՝ պատճառ դառնալով դրախտից նրանց վտարմանը:

Այս վտարմանն է նվիրված Մեծ պահքի երկրորդ՝ Արտաքսման կիրակին:

*Վարդան ԴԵՎՐԻԿՅԱՆ*
*Բանասիրական գիտ. թեկնածու*

# ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ. ՀԱՏԸՆՏԻՐ



Իմ սեղանին է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ վերջերս լույս տեսած Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունների մեծածավալ ընտրանին, որի հեղինակը վաստակաշատ արվեստաբան, 1967-2004 թթ. Մ. Սարյանի տուն-թանգարանի, 1990-2002 թթ. համատեղության կարգով նաեւ Ազգային պատկերասրահի, իսկ 2005 թ. Մայր Աթոռ Սբ Էջմիածնի՝ «Խրիմյան» թանգարանի տնօրեն, տասնյակից ավելի մենագրությունների, ալբոմների, հարյուրավոր հոդվածների հեղինակ Շահեն Խաչատրյանն է, արվեստաբան, ով իր գիտակցական ողջ կյանքն անմնացորդ նվիրաբերել եւ շարունակում է նվիրել արդի հայ կերպարվեստի, այս ոլորտի շատ ու շատ ներկայացուցիչների ժառանգության, նրանց ստեղծագործական որոնումների ու ընթացքի ուսումնասիրությանը: Արվեստաբանի գործունեության մեջ, սակայն, բացառիկ տեղ է հատկացված Մ. Սարյանի կյանքին ու ստեղծագործությանը, որի լավագույն ապացույցներից մեկն էլ այս նոր ալբոմն է:

Անշուշտ, թերթային մի ակնարկի սահմաններում դժվար է անդրադառնալ Շահեն Խաչատրյանի կատարած գործերին՝ անուն առ անուն, դժվար է ամփոփ գնահատական տալ նրա ողջ գործունեությանը. ամեն մի արածի տեսանելի կողմի շրջերեսին անդադրում օրեր են, անքուն գիշերներ, հույզ ու ապրումներ... Ինքն իրեն, Սարյանի բնորոշմամբ, թանգարանի զինվոր է համարում, ես կասեի՝ թանգարանի անխոնջ մի նվիրյալ, ով հանուն գործի անտեսում է չափի ու սահմանի եզրագծերը, անտեսում ուզածդ անձնական հարց ու խնդիր, ուզածդ դժվարություն, նույնիսկ՝ սեփական առողջությունը: Որեւէ նկար Հայաստան բերելու համար պատրաստ է երկրից երկիր անցնելու, բազում խոչընդոտներ հաղթահարելու, բազում մարդկանց հետ զրուցելու, նրանց համոզելու, վստահեցնելու՝ մինչեւ հասնի ցանկալի նպատակին: Եվ այդ ամենը՝ ի նպաստ նրա, որ մեկ արժեքով եւս հարստացնի Ազգային պատկերասրահի, Սարյանի տուն-թանգարանի, այսօր արդեն Մայր Աթոռ Սբ Էջմիածնի գեղարվեստական հավաքածուները՝ առանց անդրադառնալու այն հանգամանքին, որ մի օր իրեն շնորհակալություն հայտնելու փոխարեն կարող են նաեւ մինչեւ իսկ... խաչին գամել: Իսկ նրանք, ովքեր անձնապես ճանաչում են Շահենին, ովքեր բարեկամություն են անում նրա հետ, չեն կարող չփաստել, որ այս անդադրում ու անհանգիստ «զինվորը» նաեւ չափազանց բարի ու ներողամիտ մարդ է, զգայուն, դրսեւորումների մեջ խիստ նրբանկատ, զուսպ ու հավասարակշիռ, ու եթե ընկեր է, ապա՝ անդավաճան ու անշահախնդիր: Նրա ոչ միայն մասնագիտական, այլեւ մարդկային այս հատկանիշներն էին պատճառը, որ Սարյանի պես քանքարաշատ ու իմաստուն արվեստագետը հենց սկզբնապես իր թանգարանի տնօրեն ընտրեց Շահեն Խաչատրյանին եւ մինչ մահ չբաժանվեց նրանից: Նրանց միջեւ ստեղծվել էր բարեկամության ու վստահության այնպիսի մի մթնոլորտ, որ շատերի նախանձը կարող էր շարժել եւ չի բացառվում, որ մինչ այսօր էլ շարժում է...

Եվ ահա այս հատընտիրը, որի հրատարակությունն ասես ցանկալի ընծա եղավ մեծ նկարչի ծննդյան 130-ամյակին, առաջին անգամ մեզ՝ ընթերցողներիս, ծանոթացնում է Սարյան նկարչի՝ կյանքի ու արվեստի մասին մտքերին ու խոհերին, նրա՝ մինչ այժմ մեզ անծանոթ արձակ բանաստեղծություններին: Հատընտիրում մասունքի պես տեղ են գտել նաեւ Սարյանի բազում նամակներից ու հոդվածների պատառիկներ, որոնք լավագույնս բացահայտում են այդ մեծ մարդու ու ստեղծագործողի մարդկային էությունը՝ իր ողջ գույներով ու երանգներով, իր ժողովրդի ու սրբությունների նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Ուշագրավ է նաեւ այն բաժինը, որում ամփոփված են աշխարհի շատ հայտնի արվեստագետների գնահատանքի ու արժեւորումի խոսքերը՝ Սարյանի անձի ու արվեստի մասին:

Պատկերագրքում զետեղված է շուրջ 200 սքանչելի ստեղծագործություն, որոնք հնարավորինս շոշափում են նկարչի ստեղծագործական հիմնական 3 շրջանները: Խաչատրյանի մենագրական բնույթ կրող ընդարձակ հոդվածում խիստ ուշագրավ ու հետաքրքիր են ոչ միայն նրա արվեստաբանական բնորոշումներն ու վերլուծումները, այլեւ այն մեջբերումներն ու քաղվածքները, որոնք նա վերցրել է Սարյանի զրույցներից, հուշերից, տարբեր առիթներով արտահայտած խոսքերից: Ինչպես օրինակ՝ քչերը կարող էին իմանալ, որ պատանի Սարյանը հայրենի Նոր Նախիջեւանում սովորել է հայկական դպրոցում եւ երգել տեղի եկեղեցու երգչախմբում, ուր նրա առաջին ուսուցիչներից է եղել Չորեքչյանը՝ հետագայում Գեւորգ 6-րդ Ամենայն Հայոց կաթողիկոսը: Չորեքչյանի մարդկային կերպարն իր անջնջելի հետքն է թողել մեծ նկարչի աշխարհընկալումների վրա, ամրապնդել նրա՝ մեծ կյանքի հանդեպ ունեցած հավատամքը, որ բացառապես սնվել է Հայ Առաքելական Եկեղեցու դարավոր ուսմունքից՝ հետագայում որտեղ եւ ինչ միջավայրում էլ նա ապրելիս ու ստեղծագործելիս է եղել:




Ավելացնենք նաեւ, որ ընտրանին համեմված է նաեւ բազում լուսանկարներով, որոնք պատմում են նկարչի կյանքի այս կամ այն դրվագի, նրա հանդիպումների, ստեղծագործական պահերի մասին:

Այս, իհրավի, սքանչելի ընտրանին, որի խիստ բարձրորակ տպագրությունն իրականացրել է «Փրինթինֆո» հրատարակչությունը, ոչ միայն նվեր է Սարյանի ծննդյան 130-ամյակին, այլեւ՝ յուրօրինակ ու խիստ ուսանելի նվեր. պատկերագիրքը հեղինակի՝ Շահեն Խաչատրյանի որոշմամբ ենթակա չէ վաճառքի: Այն միայն նվիրաբերվում է Հայաստանում եւ Սփյուռքում գործող գրադարաններին, թանգարաններին, դպրոցներին եւ կրթամշակութային այլ հաստատություններին:

*Ա. Ս.*





# «ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» զրուցաշար

## ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ էջ 6*

Քավ լիցի, ես աղքատություն չեմ քարոզում, ոչ էլ հարստությանն եմ դեմ: Խոսքն աստվածադիր բարոյական արժեքների մասին է, որոնք կարող են դավանել կամ որոնցից կարող են զուրկ լինել թե՛ աղքատները եւ թե՛ հարուստները: Ինչի՞ է նման կամ ո՞ւմ է պետք այն ընտանիքը, որի անդամները, ամեն ինչով ապահովված, իրար երեւս անգամ չեն ուզում տեսնել, միմյանց հետ մարդավարի չեն շփվում, եւ նրանց՝ իրար հետ կապողը, թերեւս, միայն սնափառությունն է: Խոսքս անտարբերության մասին է, մի յուրատեսակ չարիքի, որն ինքնին բարոյական անկման չափազանց տխուր մի դրսեւորում է. չտեսնել, չզգալ, չապրել մերձավորի հույզերով ու խնդիրներով, ուրախություններով ու տխրություններով առհասարակ, նույնն է՝ չկարեկցել, չսիրել, չունենալ օգնելու ցանկություն անգամ այն ժամանակ, երբ նա դրա կարիքն ունի:

**- Շատ է խոսվում այն մասին, որ ԶԼՄ-ներով, ի մասնավորի՝ հեռուստատեսությամբ, այսօր մեզ մեծ մասամբ հրամցվում են հոռի, ապականված բարքեր՝ դրանով իսկ խրախուսելով ամեն տեսակի շեղումներ, անբարոյականություն ու ամենաթողություն՝ իրենց ստորագույն մակարդակում: Բայց կարծես թե միայն խոսվում է: Իրո՞ք վտանգված է այսօր հայ ընտանիքը:**

- Չափազանց ցավալի հարց է սա, որի լուծումը մեր օրենսդիրները կա՛մ չունեն, կա՛մ չեն ուզում ունենալ, ցավոք: Մյուս կողմից ցավալիորեն տարօրինակ է մարդկանց կեցվածքը, ովքեր կամովին հանդուրժում, իսկ հաճախ էլ սիրահոժար հյուրընկալում են հեռուստացույցի էկրանից ընտանիք նեխուժող տարատեսակ պղծությունները: Չէ՞ որ ոչ ոք չի ստիպում սեղմել հենց այն ալիքի կոճակը, որտեղից պղծություններ են հորդում: Տեսեք՝ որեւէ մեկն իր տան մեջ՝ երեխաների ներկայությամբ, նման պղծություն չի հանդուրժի, իսկ հեռուստատեսությամբ... Ի՞նչ է, էկրանի հանգամանքը մեղմե՞ց պղծությունը, իբրեւ թե այդ մարդիկ ֆիզիկապես ներկա չե՞ն քո տանը: Շա՞տ մեծ է տարբերությունը: Մի՞թե պարզ չէ, սա ընդամենը ինքնախաբեություն է: Եվ քանի որ այլ ելք չունենք, իմ խորհուրդը պիտի լինի հատկապես ծնողներին՝ խիստ ընտրողաբար միացնել այս կամ այն ալիքը: Շատ է խոսվել սերիալների մասին, դրանց հոգեկործան հետեւանքների մասին, բայց, միեւնույն է, մարդիկ շարունակում են նայել: Հասկանալի է՝ որոշ մարդկանց՝ սցենարիստների, ռեժիսորների, դերասանների համար դա ապրուստի միջոց է: Բայց, հավատացեք, եթե չարիքը, վատ օրինակն է գերակայողը՝ քարոզչության նյութը, ապա կամա-ակամա այն իր ավերիչ ներգործությունն է ունենում մարդկանց հոգիներում: Հատկապես մեր, այսպես կոչված, ազգային սերիալների պարագայում, որոնց գլխավոր նյութը հանցավոր աշխարհն է... Էլ ո՞ւր մնացին քո դարավոր մշակույթը, ազգային արժեքները, բարձր իդեալները, որով սերունդներ են դաստիարակվել: Մի՞թե ափսոս չեն մեր երեխաները, որ ուրիշ իդեալ չունենալով՝ ուզում են նմանվել հեռուստացույցի էկրանից գողական ժարգոնով զազրախոսող այս կամ այն «հերոսին», հանցավոր աշխարհի կարկառուն ներկայացուցչին, այն հանցավոր աշխարհի, որը քեզ ստիպում է ընդունել իր «օրենքները»: Իսկ ի՞նչ են դրանք, եթե ոչ բռնության ու բիրտ ուժի գովք, որոնք հետին պլան են մղում, ավելին՝ ծաղրում ու ոչնչացնում են հոգեւոր ու բարոյական սկիզբ ունեցող ամենայն արժանիք՝ մարդկային արժանապատվությունից սկսած եւ առաքինություններով վերջացրած: Մեծ հաշվով սրանք նաեւ աստվածմերժության ու աստվածհայհոյության դրսեւորումներ են, եւ մնում է ասել՝ երանի՜ նրանց, ովքեր չեն գայթակղվում:

*Հյուրընկալեց*
*Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ*

## Ս. ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

# ՆԵՐԲՈՂ

## Ասված Քրիստոսի Ծննդյանը

*Սկիզբը՝ էջ 5*

Արթնացի՛ր, եկեղեցի՛, քո գեղացկազարդ երգերով եւ օրհնության պատարագնե՛ր մատուցիր քո Տիրոջը Նրա ծննդյան օրը:

Այսօր ելնում է Սիոնը եւ մտնում է հեթանոսների եկեղեցի, եւ բարձրանում է Նրա զավակի խոնարհված գլուխը:

Այսօր հարս դարձած եկեղեցին ուրախանում է Փեսայի տունդարձով, Ում ինքը թողել էր եւ գնացել դիվամոլ կռապաշտության ետեւից:

Այսօր ցնծում է վաղուց ի վեր վշտացածը, քանզի եկավ Փեսան՝ հանելու իրեն դեւերի խավարային մոլորությունից:

Այսօր զոհանում է բռնակալի կապանքներով կապվածը, քանզի եկավ Ազատիչը, քանդեց անգիտության կապանքները եւ ազատեց իրեն:

Այսօր Ստեղծիչը վերստին նկարեց Իր ապականված պատկերը եւ նրան խառնեց անմահության դեղը, որպեսզի հավիտյան այլեւս չեղծվի:

Այսօր իմաստուն Քահանայապետը շինեց ընկած տունը եւ նրա մեջ դրեց աստվածային անշարժելի սյունը:

Այսօր Տերը հաշտվեց Ադամի հետ, քանզի Որդին, Ով ծնվեց, խաղաղություն հաստատեց Հոր եւ Ադամի միջեւ:

Այսօր Տերը գտավ մոլորված ոչխարին եւ վերցնելով Իր ուսերի վրա՝ վերադարձրեց Եդեմի դրախտ:

Այսօր վերադարձան հեթանոսների հոտերը, քանզի քաջ Հովիվը հալածեց հոշոտող գայլերին եւ փրկեց նրանց:

Այսօր արտաքինները ներքիններ եղան (այսինքն՝ հեթանոսներն Աստծո ժողովուրդ եղան - Մ. Ա.), իսկ մերձավորները խռովվեցին ու դուրս ելան Թագավորի տնից:

Այսօր զորությունների Տերը իջնելով՝ կործանեց մեհյանները եւ ջնջեց նրանցից չաստվածների անունները: Այսօր հայտնվեց աշխարհը գերությունից [ազատող] հզոր Պատերազմողը, Ով կապեց ապստամբ գերողին եւ Իր զորությամբ վերադարձրեց գերվածներին:

Այսօր եկավ հիվանդների ու վիրավորվածների բժիշկը, Ով բժշկում ու առողջացնում է ծրի, եւ Ինքն է վարձք տալիս նրանց, ում բժշկում է:

Այսօր կինը մեր գանգվածի մեջ թաքցրեց կյանքի թթխմորը՝ աստվածային գիտությունը, որից ունայնացել էր մարդկային ազգը, մինչեւ այն ամբողջությամբ խմորվեց:

Այսօր կենդանի աղը իջավ Բարձրյալից եւ համեմեց մեր անհամությունը՝ ըստ Եղիսեի առակի:

Այսօր Հորից կյանքի առհավատչյա [տվող] հրաման ելավ, քանզի Որդու ծննդյամբ մարդկային ազգը հրավիրեց երկինք:

Այսօր՝ այս անպտուղ ամսին, Երկնավորից մեզ կյանքի Պտուղ առաքվեց:

Այս ամսին, որ դատարկ է ամենայն եկամուտից, մեզ առաքվեց կյանքի Խուրձը եւ հագեցրեց մեզ:

Այս ամսին, երբ աղքատանում են բոլոր տառապողները, Մեծատունն իջավ եւ Իր գանձերը բաշխեց բոլոր տնանկներին:

Այս ամսին, երբ այգին դատարկ է խաղողից, կույս որթատունկն իր արգանդից մեզ Ողկույզ պարգեւեց:

Այս ամսին, երբ թափվում են ծառերի տերեւները, լուսեղեն զգեստների փոխվեցին Ադամի տերեւները:

Այս ամսին, երբ սառնամանիքը կապում է սերմերը, ծարավուտ ու անբերրի հողից բարի Սերմը տրվեց մեզ:

Այս ամսին, երբ երկիրը սպառվում է բարիքներից, երկնավոր Բարիքը առաքվեց մեր հոգիներին:

Այս ամսին, երբ լույսի աստիճաններով բարձրանում է արեգակը, մեզ համար ծագեց արդարության Արեգակը եւ լուսավորեց մեզ:

Այս ամսին, երբ խավարը տեղի է տալիս եւ ետ դառնում՝ հաղթվելով լույսից, պարտվեց չարը, ետ դարձավ եւ զրկվեց իր իշխանությունից:

Այս ամսին, երբ կարճանում է գիշերը, կրճատվում լիությունից, եւ աճում է առավոտը, մարդկանց միջից ջնջվեցին չարի թակարդներն ու որոգայթները:

Այս ամսին, երբ խավարը դատապարտվում է լույսից, անեղ լույսից դատապարտվեց խավարի իշխանությունը:

Այս ամսին, երբ հնացածները նորոգվում են իրենց մեջ, մեր Տերը նորոգեց առաջիններին:

Այս ամսին, երբ թագավորները տալիս են նոր հրամաններ, մեծ Թագավորից երկրին խաղաղության հրաման ելավ:

Այս տոնին, երբ բարձր ձայներով երգում են հրեշտակները, իրենց ովսաններով գոհանում են հեթանոսների հավաքված բազմությունները:

Այս տոնին, որ սպասավորվեց երկնավորների կողմից, ծնված Աստված ընդունում է երկրավորներիս երկրպագությունը:

Այս տոնին Քո ծննդյան փառաբանությունը երգեցի. Քո երեւալու աhեղ օրը՝ Քո Աստվածության ողորմությունը:



Այս առավոտյան սակավ խոսքերով օրհնեցի Քեզ, արժանացրո՛ւ ինձ՝ օրհնելու Քեզ մեծ եւ անսպառ առավոտյան:

Այս առավոտյան Քո Եկեղեցուն մատուցեցի իմ խոսքերի պատարագը, հավիտենից առավոտյան դասի՛ր ինձ Քո առագաստ հրավիրվածների դասում:

Այս առավոտյան փառաբանություն Քո Հորը, անդադար օրհնություն Քեզ եւ երկրպագություն Սուրբ Հոգուն, իսկ մեզ՝ հավատացյալներիս, ողորմություն այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:

*Գրաբարից փոխադրեց*
*Մարթա ԱՐԱԲՅԱՆԸ*

## Մետրոպոլիտ Անտոնի ՍՈՒՐՈԺՍԿԻ

# ԱՆՔՆՆԵԼԻ ԵՆ ԱՍՏԾՈ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ



*«Ուրեմն մենք մոլորվեցինք ճշմարտության ճանապարհից, արդարության լույսը չլուսավորեց մեզ, եւ մեր սրտերում չծագեց արդարության արեգակը: Մենք խրվեցինք անօրենության եւ կորստյան շավիղների մեջ, գնացինք անկոխ անապատներով եւ չճանաչեցինք Տիրոջ ճանապարհները: Ի՞նչ շահ բերեց մեզ հպարտությունը, եւ ինչ նպաստ բերեց մեզ հարստությամբ պարծենալը: Այդ ամենն անցավ ինչպես ստվեր եւ թռավ ինչպես մարդու վաղանցուկ համբավ»*

*Իմաստություն Սողոմոնի Ե 6-9*

Մարդը, որեւէ բանից հմայվելով, ամբողջովին այլակերպվում է: Փոխվում է նրա աշխարհայացքը, փոխվում նաեւ նրա վերաբերմունքը՝ իր շուրջը կամ ենթակայության տակ գտնվող իրերի ու առարկաների հանդեպ: Հաճախ նա դադարում է դա զգալուց եւ ամեն ինչ տեսնում իր՝ «դրական աշխարընկալման» պրիզմայի միջով: Ուղղափառ ուսմունքի համաձայն՝ նման մարդն ընկնում է գայթակղության, այն է՝ խիստ դժվարին հաղթահարվող մեղսալի մի մոլուցքի մեջ:

Եթե ենթադրենք, որ այդ կանոնի կողմնակիցներն արդեն հասել են նման «դրական փոփոխությունների» որոշակի մակարդակի, ապա կստացվի, որ մեզ սպասվում է լուսավոր ապագայի բավականին յուրօրինակ մի պատկեր: Չգիտենք՝ դուք ինչպես, բայց մենք չէինք կամենա նման մարդկանց հետ հայտնվել նույն նավակում. առաջինն այն պատճառով, որ նրանք բավականաչափ թերուս են, երկրորդը՝ որ պատկառանք չունեն, եւ երրորդը՝ որ այդչափ խորամանկ են:

Փորձել ապացուցել էնիոլոգներին *(Էնիոլոգիա - էներգատեղեկատվական փոխազդեցություն - թրգ.)*, որ նրանք ճիշտ չեն, զուր աշխատանք է եւ ժամանակի անիմաստ կորուստ: Սակայն բանը միայն այն չէ, որ նրանք գիտակցաբար կանգնում են ուզածդ հակադիր կողմում, եթե փորձ է արվում քննադատաբար մոտենալ նրանց կողմից տարվող հետազոտություններին, այլ՝ որ նրանք արդեն իսկ գայթակղված են իրենց ուսմունքով, արդեն իսկ իրենց սնապաշտություններն ու նախանշանակները կապել են «էներգատեղեկատվական փոխազդեցության» հետ, արդեն իսկ ընկել են մեզ քաջածանոթ «էքստրասենսի» հմայքի տակ, եւ նրանց, առանց այդ միջավայրից կտրելու, հնարավոր չէ որեւէ բան բացատրել:

Սա նման է աղանդի, մաֆիայի կամ էլ էզոտերիկ (գաղափար, տեսություն, որը նախատեսված է միայն հրազեկների համար, հասկանալի է միայն մասնագետներին - թրգ.) որեւէ դպրոցի, որտեղ ճանապարհը մի ուղղությամբ է միայն, եւ հետադարձը չկա: Դա մի համակարգ է, որում ոչ մի կենդանի ու առողջ միտք արդեն չի կարող գոյություն ունենալ: Թերեւս պատահական չէ, որ այս կացությունն ըստ օրենքի ներկայացուցիչներից մեկն այն մի անգամ համեմատեց կայարանից դուրս եկող գնացքի հետ, երբ ուղեկցորդը ձայնում է. «Շո՛ւտ-շո՛ւտ թռեք-նստեք. եթե մեկնում է, նշանակում է ինչ-որ տեղ կհասնենք»: Այո՛, շատերի համար իրողությունը հենց այսպիսին է լինելու. հիվանդացար՝ վազիր էքստրասենսի մոտ, չհաջողվեց՝ հուսադրիր քեզ, թե բախտդ չբերեց, հոգնել ես՝ դիմիր մեդիտացիայի, եւ այսպես շարունակ: Ահա այսպես մարդիկ գնացք են նստում, որը ոչ մի տեղ չի մեկնում, ավելի ճիշտ՝ մարդկանց տանում է դեպի ֆինանսական մրցավազքի ու դրանից կախվածության անդունդը, տանում աշխարհի ու սեփական անձի նկատմամբ խելահեղության եւ իրական պատկերացումների կորստյան:

Այսօր մենք մեր խոսքն ուղղում ենք նրանց, ովքեր նոր-նոր որոշել են մոտիկից ծանոթանալ աննորմալ երեւույթների եւ «չբացահայտված թռչող օբյեկտների» հետ, մենք փորձում ենք դրանցից զերծ պահել այն մարդկանց, ովքեր դյուրահավատորեն լսում են էքստրասենսորիկների ճոռոմաբանությունները, որոնք փորձում են ամեն ինչ ու ամեն բան բացատրել ու ապացուցել իրենց իմաստահնար ծեւակերպումներով: Մենք կամենում ենք օգնել նրանց, ովքեր պատրաստ են լսելու մեզ եւ չեն դադարել դեռեւս տրամաբանորեն մտածելուց:

Մենք, որ բժիշկ ենք ու ֆիզիկոս, հոգեւորական ու աշխարհական, երկար տարիների փորձառությունից ու կյանքի դառը ճշմարտությունից ելնելով, Աստծու եւ մարդկանց առջեւ վկայում ենք, որ մարդկային գործունեության այդ ոլորտը ծովածով վշտեր ու անհաշիվ դժբախտություններ է բերում, նրանց հոգիների վրա թողնում է չամոքվող սպիներ, խեղում մարդու հոգեբանությունը, միլիոնավոր մարդկանց շեղում հանապազօրյա գործերից: Այն մինչ այսօր ոչ մի իրական, կարեւոր բան չի տվել մարդուն:

Բնագիտությունը հսկայական ու սքանչելի աշխարհ է: Սովորելով ֆիզիկա կամ մաթեմատիկա՝ դուք ճանաչում եք մեզ շրջապատող աշխարհը, խորացնում ձեր իմացությունները՝ նրանում ընթացող պրոցեսների մասին: Հետաքրքրվելով հոգեբանությամբ ու փիլիսոփայությամբ՝ դուք սկսում եք ավելի լավ հասկանալ ձեզ եւ մարդկանց: Յուրացնելով համակարգիչը եւ ուսումնասիրելով ինֆորմատիկան՝ դուք հեշտացնում եք ձեր առջեւ դրված տեխնիկական ու հաշվողական բարդ ու խրթին խնդիրների լուծումը: Իսկ երբ զբաղվում եք զանազան կեղծ գիտություններով, դուք ուղղակի խորանում եք ինչ-որ մեկի երեւակայության մեջ եւ հագուրդ տալիս ձեր իսկ ինքնասիրությանը, կտրվում ճշմարիտ գիտական մեթոդներից եւ զրկվում իրականության մասին օբյեկտիվ պատկերացումներից:

Բոլոր այդ «նոր տեսությունները» լավ մոռացված հին ուսմունքներն են, եւ մենք ուղղակի բարեկամաբար խորհուրդ ենք տալիս, որ մինչ կփորձեք հագեցնել ձեր իմացության ծարավը՝ կրկին մեջտեղ եկած հին ու իրենց դարն ապրած ջրհորներից, փորձեք ըմպել Նոր Կտակարանի թարմ ակունքներից բխող «ջրերը»: Եվ եթե ձեզ կթվա, որ Սուրբ Գրքի եւ սրբազան Ավանդության հոգեւոր հացը չափից ավելի բարդ է ըմբռնելու համար, ապա սկսեք ժամանակակից ուղղափառ քարոզիչներից, որոնք հմտորեն կարողանում են համադրել Աստվածաշնչի իրենց խորհմացությունը եւ Եկեղեցու հայրերի ուսմունքը ժամանակակից մարդու մտորումների ու զգացմունքների հետ, *«Քանի որ ունենք այս պաշտոնը Աստծո ողորմությամբ, չենք տկարանում. այլ հրաժարվեցինք ամոթալի խորհուրդներից, որպեսզի խորամանկությամբ չընթանանք եւ Աստծո խոսքը չնենգափոխենք, այլ ճշմարտությունը հայտնելով՝ մենք մեզ հանձնում ենք բոլոր մարդկանց խղճմտանքին՝ Աստծո առաջ: Եվ եթե մեր Ավետարանը ծածկված իսկ է, ծածկված է կորստյան մատնվածների համար, որոնց՝ այդ անհավատների մտքերը այս աշխարհի աստվածը կուրացրեց, որպեսզի նրանց մեջ չծագի Քրիստոսի Ավետարանի փառքի լույսը, Քրիստոսի, որ պատկերն է աներեւույթ Աստծո»* (Բ Կորնթ. Դ 1-4):

*Թարգմանությունը՝*
*Ռուզաննա ԱՐՈՅԱՆԻ*


**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**

**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր.
17. 2. 2010 թ.

**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**